

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ազարյան Ս. Ա., Գրիգորյան Տ. Մ.

ԻՆՏԵԳՐԱԼՆԵՐԻ ԵՎ ՍՈՎՈՐԱԿԱՆ
ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ
ՖԻԶԻԿԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ
(ուսումնասովանողակ ձեռնարկ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 517.958:53(075.8)

ԳՄԴ 22.161.6+22.311g73

Ա 227

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:*

Ազարյան Ս. Ա., Գրիգորյան Ս. Մ.

Ա 227 Ինտեգրալների և սովորական դիֆերենցիալ հավասարումների կիրառությունը ֆիզիկայի խնդիրներում (ուսումնասովանողական ձեռնարկ) / Ս. Ա. Ազարյան, Ս. Մ. Գրիգորյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2023, 136 էջ:

Ձեռնարկի առաջին գլխում ներառված են ֆիզիկայի եզրային խնդիրներ, որոնց լուծումները հանգեցնում են որոշյալ, կորագիծ, կրկնակի, եռակի, մակերևութային ինտեգրալների, ինչպես նաև ինտեգրալային գումարների սահմանների հաշվմանը:

Երկրորդ գլխում ընդգրկված են ֆիզիկայի այնպիսի եզրային խնդիրներ, որոնք հանգեցնում են առաջին ու երկրորդ կարգի սովորական դիֆերենցիալ հավասարումների կիրառմանը:

Ուսումնասովանողական ձեռնարկում քննարկվող թեմաների վերաբերյալ լուծված խնդիրներն ու առաջադրանքները կնպաստեն ուսանողների իմացության մակարդակի բարձրացմանը:

Ձեռնարկը նախատեսված է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի 1-ին ու 2-րդ կուրսերի ուսանողների համար:

ՀՏԴ 517.958:53(075.8)

ԳՄԴ 22.161.6+22.311g73

ISBN 978-5-8084-2649-8

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426498>

© ԵՊՀ հրատ., 2023

© Ազարյան Ս. Ա., Գրիգորյան Ս. Մ., 2023

Գլուխ 1. ՈՐՈՇՅԱԼ ԻՆՏԵԳՐԱԼ

§ 1.1. Որոշյալ ինտեգրալի գաղափարը

Դիցուք $[a; b]$ հատվածի վրա տրված է $y = f(x)$ սահմանափակ ֆունկցիան: $[a; b]$ հատվածը

$$x_k; (a = x_0 < x_1 < \dots < x_n \equiv b)$$

կամայական կետերով տրոհենք մասերի, յուրաքանչյուր $[x_k; x_{k+1}]$ հատվածի վրա վերցնենք կամայական ξ_k կետ և կազմենք հետևյալ ինտեգրալային գումարը՝

$$\sigma(x_k; \xi_k) = \sum_{k=0}^{n-1} f(\xi_k) \Delta x_k; (\Delta x_k = x_{k+1} - x_k): \quad (1.1.1)$$

Սահմանում 1. Եթե

$$\lambda = \max_{k \leq n} (\Delta x_k) \rightarrow 0$$

(1.1.1) ինտեգրալային գումարը, անկախ տրոհման եղանակից և անկախ ξ_k կետերի ընտրությունից, ձգտում է վերջավոր I սահմանի, այսինքն՝

$$\forall \varepsilon > 0, \exists \delta(\varepsilon) > 0, \lambda > \delta \Rightarrow |\sigma - I| < \varepsilon,$$

ապա $y = f(x)$ ինտեգրելի է $[a; b]$ -ում, և (1.1.1)-ի գումարի սահմանը տրվում է հետևյալ ներքոգրյալ սիմվոլով՝

$$\lim_{\lambda \rightarrow 0} \sigma(x_k; \xi_k) = \lim_{\lambda \rightarrow 0} \sum_{k=0}^{n-1} f(\xi_k) \Delta x_k = I = \int_a^b f(x) dx: \quad (1.1.2)$$

Դժվար չէ նկատել, որ $[a; b]$ -ում որոշված անընդհատ ֆունկցիան ինտեգրելի է:

Որոշյալ ինտեգրալը հաշվելու համար օգտվելու ենք ներքոհիշյալ բանաձևերից:

1.1. Նյութոն-Լայբնիցի բանաձև

Սահմանում 2. Եթե $F(x)$ -ը $y = f(x)$ անընդհատ ֆունկցիայի որևէ նախնականն է $[a; b]$ հատվածում, ապա՝

$$\int_a^b f(x)dx = F(x)|_{x=a}^{x=b} = F(b) - F(a): \quad (1.1.3)$$

1.2. Մասերով ինտեգրման բանաձև

Սահմանում 3. Եթե $U(x)$ և $V(x)$ ֆունկցիաները $[a; b]$ -հատվածում ունեն անընդհատ ածանցյալներ, ապա՝

$$\int_a^b U(x)dV(x) = U((x)V(x))|_{x=a}^{x=b} - \int_a^b V(x)dU(x): \quad (1.1.4)$$

1.3. Փոփոխականի փոխարինման բանաձև

Սահմանում 4. Եթե $[a; b]$ հատվածում որոշված $x = \varphi(t)$ ֆունկցիան բավարարում է հետևյալ պայմաններին՝

ա) $x = \varphi(t)$ -ն մոնոտոն է, $\varphi(a) = a, \varphi(b) = b$:

բ) $\varphi(t)$ ֆունկցիան գոյություն ունի և անընդհատ է $[\alpha; \beta]$ -հատվածում, ապա $[a; b]$ հատվածում որոշված կամայական $f(x)$ անընդհատ ֆունկցիայի համար ճիշտ է՝

$$\int_a^b f(x)dx = \int_{\alpha}^{\beta} f[\varphi(t)]\varphi'(t)dt: \quad (1.1.5)$$

Պարզենք (1.1.5) բանաձևի մեխանիկական իմաստը:

Դիցուք $[a; b]$ -հատվածի վրա $\rho(x)$ զծային խտությամբ ($\rho(x)$ -ը անընդհատ ֆունկցիա է $[a; b]$ -ում), բաշխված է որոշակի m զանգված, որը հաշվելու համար $[a; b]$ հատվածը կամայական x_k կետերով տրոհենք $[x_k; x_{k+1}]$ մասերի, յուրաքանչյուր $[x_k; x_{k+1}]$ -ով բաշխված է Δm_k զանգվածը՝

$$\lambda = \max_{0 \leq k \leq n} (\Delta x_k) = \max_{0 \leq k \leq n} (x_{k+1} - x_k)$$

փոքր վերցնելու հաշվին, մոտավորապես հավասար կլինի $\rho(\xi_k)(x_{k+1} - x_k)$ -ին (ξ_k -ն որևէ կետ է $[x_k; x_{k+1}]$ - հատվածից): Հետևաբար m զանգվածը քիչ կտարբերվի

$$\sum_{k=0}^{n-1} \rho(\xi_k) \Delta x_k$$

գումարից, m -ի ճշգրիտ արժեքը կստացվի (ըստ տրված հատվածով բաշխված զանգվածի սահմանման), եթե անցնենք սահմանի երբ $\lambda \rightarrow 0$, այսինքն՝

$$m = \lim_{\lambda \rightarrow 0} \sum_{k=0}^{n-1} \rho(\xi_k) \Delta x_k: \quad (1.1.6)$$

Այսպիսով՝ $[a; b]$ հատվածով բաշխված m զանգվածը ρ գծային խտությամբ միջոցով արտահայտվում է հետևյալ կերպ.

$$m = \int_a^b \rho(x) dx: \quad (1.1.7)$$

Պատկերացնենք, որ $\rho(x)$ գծային խտությամբ $[a; b]$ նյութական հատվածը ձգվելով կամ սեղմվելով (ոչ անպայման հավասարաչափ) բերվում է ինչ-որ $\gamma(t)$ գծային խտությամբ $[\alpha; \beta]$ հատվածի:

Ենթադրենք՝ $[\alpha; \beta]$ հատվածի նշված փոխամիարժեք արտապատկերումը $[a; b]$ -ի վրա իրականացվում է ա, բ պայմաններին բավարարող $x = \varphi(t)$ ֆունկցիայի օգնությամբ:

Նկատենք, որ $[\alpha; \beta]$ նյութական հատվածի $\gamma(t)$ խտությունը՝

$$\gamma(t) = \rho[\varphi(t)]\varphi'(t); \quad t \in [\alpha; \beta]: \quad (1.1.8)$$

Իրոք, ըստ խտության սահմանման՝

$$\gamma(t_0) = \lim_{\Delta t \rightarrow 0} \frac{\Delta m}{\Delta t}; t_0 \in [\alpha; \beta],$$

որտեղ Δt -ն t_0 կետը պարունակող կամայական $[\alpha; \beta]$ հատվածի երկարությունն է, իսկ Δm -ը՝ այդ հատվածով բաշխված զանգվածը: $x = \varphi(t)$ արտապատկերման (սեղման կամ ձգման) ժամանակ Δt երկարությամբ t_0 կետը պարունակող հատվածը կարտապատկերվի $x_0 = \varphi(t_0)$ կետը պարունակող Δx երկարությամբ հատվածի վրա, որով բաշխված զանգվածը ակնհայտորեն նորից Δm -ն է:

Օգտվելով $x = \varphi(t)$ ֆունկցիայի դիֆերենցելիությունից՝ կստանանք՝

$$\begin{aligned} \gamma(t_0) &= \lim_{\Delta t \rightarrow 0} \frac{\Delta m}{\Delta t} = \lim_{\Delta t \rightarrow 0} \left(\frac{\Delta m}{\Delta x} \cdot \frac{\Delta x}{\Delta t} \right) = \\ &= \lim_{\Delta x \rightarrow 0} \frac{\Delta m}{\Delta x} \cdot \lim_{\Delta t \rightarrow 0} \frac{\Delta x}{\Delta t} = \rho(x_0) \varphi'(t_0): \end{aligned} \quad (1.1.9)$$

Քանի որ $[\alpha; \beta]$ նյութական հատվածի գծային խտությունը $\gamma(t) = \rho[\varphi(t)] \varphi'(t)$ ՝ ըստ (1.1.8) բանաձևի, ապա $[\alpha; \beta]$ -ով բաշխված զանգվածը հավասար կլինի հետևյալ՝

$$\int_{\alpha}^{\beta} \rho[\varphi(t)] \varphi'(t) dt$$

ինտեգրալին: Մյուս կողմից այդ նույն m զանգվածը բաշխված էր $\rho(x)$ գծային խտությամբ $[a; b]$ հատվածի վրա և հավասար է.

$$\int_a^b \rho(x) dx,$$

հետևաբար՝

$$\int_a^b \rho(x) dx = m = \int_{\alpha}^{\beta} \rho[\varphi(t)] \varphi'(t) dt, \quad (1.1.10)$$

որը փոփոխականի փոխարինման բանաձևն է, մեխանիկական մեկնաբանությամբ նշանակում է $[a; b]$ նյութական հատվածի m զանգվածի պահպանելիությունը սեղման կամ ձգման ժամանակ:

1.4. Հիմնական որոշյալ ինտեգրալները

Եզրային խնդիրների լուծման ժամանակ կիրառվում են հետևյալ ինտեգրալները՝

$$1. \int_a^b x^m dx = \left(\frac{x^{m+1}}{m+1} \right) \Big|_{x=a}^{x=b} = \frac{a^{m+1} - b^{m+1}}{m+1}; \quad (m \neq -1),$$

$$2. \int_a^b \frac{A dx}{Bx} = \frac{A \cdot \ln|x|}{B} \Big|_{x=a}^{x=b} = \frac{A(\ln|b| - \ln|a|)}{B} = \\ = \frac{A}{B} \ln \left| \frac{b}{a} \right|; \quad (A, B = \text{const}),$$

$$3. \int_a^b e^{Ax} dx = \left(\frac{e^{Ax}}{A} \right) \Big|_{x=a}^{x=b} = \frac{e^{Ab} - e^{Aa}}{A},$$

$$4. \int_a^b B^{Ax} dx = \int_a^b e^{Ax \ln B} dx = \left(\frac{e^{Ax \ln B}}{A \ln B} \right) \Big|_{x=a}^{x=b} = \left(\frac{B^{Ax}}{A \ln B} \right) \Big|_{x=a}^{x=b} = \\ = \frac{B^{Ab} - B^{Aa}}{A \ln B}, \quad (B > 0; B \neq 1),$$

$$5. \int_a^b \sin Ax dx = - \left(\frac{\cos Ax}{A} \right) \Big|_{x=a}^{x=b} = \frac{\cos Aa - \cos Ab}{A},$$

$$6. \int_a^b \cos Ax dx = \left(\frac{\sin Ax}{A} \right) \Big|_{x=a}^{x=b} = \frac{\sin Ab - \sin Aa}{A},$$

$$7. \int_a^b \frac{dx}{\sin^2 Ax} = - \left(\frac{\operatorname{ctg} Ax}{A} \right) \Big|_{x=a}^{x=b} = \frac{\operatorname{ctg} Aa - \operatorname{ctg} Ab}{A},$$

$$8. \int_a^b \frac{dx}{\cos^2 Ax} = \left(\frac{\operatorname{tg} Ax}{A} \right) \Big|_{x=a}^{x=b} = \frac{\operatorname{tg} Ab - \operatorname{tg} Aa}{A}, \quad (1.1.11)$$

$$9. \int_a^b \frac{dx}{\cos Ax} = \frac{1}{A} \left(\ln \left| \operatorname{tg} \left(\frac{\pi}{4} + \frac{x}{2} \right) \right| \right) \Big|_{x=a}^{x=b} =$$

$$= \frac{1}{A} \left\{ \ln \left| \operatorname{tg} \left(\frac{\pi}{4} + \frac{b}{2} \right) \right| - \ln \left| \operatorname{tg} \left(\frac{\pi}{4} + \frac{a}{2} \right) \right| \right\},$$

$$10. \int_a^b \frac{dx}{x^2 + A^2} = \left(\frac{1}{A} \operatorname{arctg} \frac{x}{A} \right) \Big|_{x=a}^{x=b} =$$

$$= \frac{1}{A} (\operatorname{arctg} Ab - \operatorname{arctg} Aa); \quad (A \neq 0),$$

$$11. \int_a^b \frac{dx}{x^2 - A^2} = \left(\frac{1}{2A} \ln \left| \frac{x - A}{x + A} \right| \right) \Big|_{x=a}^{x=b} =$$

$$= \frac{1}{2A} \left(\ln \left| \frac{(b - A)(a + A)}{(b + A)(a - A)} \right| \right); \quad (A \neq 0),$$

$$12. \int_a^b \frac{dx}{\sqrt{A^2 x^2 \pm B^2}} = \frac{1}{A} \ln \left[x + \frac{1}{A} \sqrt{A^2 x^2 \pm B^2} \right] \Big|_{x=a}^{x=b} =$$

$$= \frac{1}{A} \ln \left[\frac{x + \frac{1}{A} \sqrt{A^2 b^2 \pm B^2}}{x + \frac{1}{A} \sqrt{A^2 a^2 \pm B^2}} \right]; \quad (A \neq 0),$$

$$13. \int_a^b \frac{dx}{\sqrt{A^2 - B^2 x^2}} = \left(\frac{1}{B} \arcsin \frac{B}{A} x \right) \Big|_{x=a}^{x=b} = \\ = \frac{1}{B} \left(\arcsin \frac{B}{A} b - \arcsin \frac{B}{A} a \right); (A, ; B \neq 0),$$

$$x = \frac{A}{B} \sin t; dx = \frac{A}{B} \cos t \cdot dt; \left(\frac{A}{B} \right)^2 - x^2 = \left(\frac{A}{B} \right)^2 - \left(\frac{A}{B} \right)^2 \sin^2 t = \\ = \left(\frac{A}{B} \right)^2 \cos^2 t:$$

Սահմանում 5. Որոշյալ ինտեգրալի արժեքը գտնվում է $f(x)$ ենթինտեգրալային ֆունկցիայի ամենամեծ և ամենափոքր արժեքների ու $[a; b]$ հատվածի երկարության արտադրյալի միջև, այսինքն՝

$$m \cdot (b - a) \leq \int_a^b f(x) dx \leq M \cdot (b - a), \quad (1.1.12)$$

որտեղ m -ն ու M -ը համապատասխանաբար $y = f(x)$ -ի ամենափոքր ու ամենամեծ արժեքներն են:

Սահմանում 6. Անընդհատ $f(x)$ ֆունկցիայի որոշյալ ինտեգրալը հավասար է $[a; b]$ ինտեգրման հատվածի որևէ միջանկյալ c կետում ֆունկցիայի արժեքի և հատվածի երկարության արտադրյալին՝

$$\int_a^b f(x) dx = f(c)(b - a): \quad (1.1.13)$$

1.5. Փոփոխական վերին սահմանով ինտեգրալ

Փոփոխական վերին սահմանով ինտեգրալ կոչվում է հետևյալ ֆունկցիան՝

$$F(x) = \int_a^x f(t) dt: \quad (1.1.14)$$

Այս $F(x)$ ֆունկցիան յուրաքանչյուր x -ի համապատասխանության մեջ է դնում որոշակի թիվ՝

$$\int_a^x f(t) dt,$$

որտեղ $y = f(x)$ -ը նախօրոք տրված ինտեգրելի ֆունկցիա է: $F(x)$ ֆունկցիան կարող է լինել ածանցելի, ինտեգրելի և այլ հատկություններով օժտված:

Թեորեմ 1. Անընդհատ $y = f(x)$ -ի փոփոխական վերին սահմանով ինտեգրալի ածանցյալը հավասար է $f(x)$ -ի.

$$F'(x) = \left[\int_a^x f(t) dt \right]' = f(x): \quad (1.1.15)$$

Ապացույց

Կազմենք $\Delta F(x)$ -ը, այսինքն՝

$$\Delta F(x) = F(x + \Delta x) - F(x) = \int_a^{x+\Delta x} f(t) dt - \int_a^x f(t) dt: \quad (1.1.16)$$


Համաձայն որոշյալ ինտեգրալի հատկության՝ կարող ենք գրել՝

$$\int_a^{x+\Delta x} f(t) dt = \int_a^x f(t) dt + \int_x^{x+\Delta x} f(t) dt: \quad (1.1.17)$$

Այդ դեպքում, հաշվի առնելով (1.115)-ը, (1.1.14)-ից կստանանք՝

$$\begin{aligned} \Delta F(x) &= \int_a^x f(t) dt + \int_x^{x+\Delta x} f(t) dt - \int_a^x f(t) dt = \\ &= \int_x^{x+\Delta x} f(t) dt: \end{aligned} \quad (1.1.18)$$

Ըստ (1.1.13)-ի՝ եթե $c \in [a; b]$ հատվածին, ինչպես ցույց է տրված Նկար 1.1-ում.



ապա այդ դեպքում՝

$$\Delta F(x) = \int_x^{x+\Delta x} f(t) dt = f(c)(x + \Delta x - x) = f(c)\Delta x:$$

Այստեղից կստանանք՝

$$\lim_{\Delta x \rightarrow 0} \frac{\Delta F(x)}{\Delta x} = F'(x) = \lim_{\Delta x \rightarrow 0} \frac{f(c)\Delta x}{\Delta x} = f(x):$$

Այսինքն՝ $F'(x) = f(x)$: **Թեորեմ**ն ապացուցվեց:

Օրինակ 1. Հաշվել որոշյալ ինտեգրալը՝

$$\begin{aligned} I &= \int_a^b e^{Ax} \sin Bx dx = \frac{1}{A} \int_a^b \sin Bx de^{Ax} = \\ &= \left(\frac{1}{A} e^{Ax} \sin Bx \right) \Big|_{x=a}^{x=b} - \frac{1}{A} \int_a^b e^{Ax} \cos Bx dx = \\ &= \frac{1}{A} (e^{Ab} \sin Bb - e^{Aa} \sin Ba) - \frac{B}{A^2} \int_a^b \cos Bx de^{Ax} \\ &= \frac{1}{A} (e^{Ab} \sin Bb - e^{Aa} \sin Ba) - \\ &- \left(\frac{B}{A^2} e^{Ax} \cos Bx \right) \Big|_{x=a}^{x=b} - \frac{B^2}{A^2} \int_a^b e^{Ax} \sin Bx dx = \\ &= \frac{1}{A} (e^{Ab} \sin Bb - e^{Aa} \sin Ba) - \\ &- \frac{B}{A^2} (e^{Ab} \cos Bb - e^{Aa} \cos Ba) - \frac{B^2}{A^2} \cdot I: \end{aligned}$$

Այստեղից կունենանք՝

$$I = \frac{1}{A^2 + B^2} [A(e^{Ab} \sin Bb - e^{Aa} \sin Ba) - B(e^{Ab} \cos Bb - e^{Aa} \cos Ba)] \quad (1.1.19)$$

Օրինակ 2. Հաշվել որոշյալ ինտեգրալը՝

$$\begin{aligned} I &= \int_a^b \pi^{Ax} \sin Bx \, dx = \frac{1}{A \ln \pi} \int_a^b \sin Bx \, de^{Ax \ln \pi} = \\ &= \left(\frac{1}{A \ln \pi} e^{Ax \ln \pi} \sin Bx \right) \Big|_{x=a}^{x=b} - \\ &- \frac{B}{A \ln \pi} \int_a^b e^{Ax \ln \pi} \cos Bx \, dx = \\ &= \frac{1}{A \ln \pi} (e^{Ab \ln \pi} \sin Bb - e^{Aa \ln \pi} \sin Ba) - \\ &- \frac{B}{(A \ln \pi)^2} \int_a^b \cos Bx \, de^{Ax \ln \pi} = \frac{1}{A \ln \pi} (\pi^{Ab} \sin Bb - \pi^{Aa} \sin Ba) - \\ &- \left(\frac{B}{(A \ln \pi)^2} e^{Ax \ln \pi} \cos Bx \right) \Big|_{x=a}^{x=b} - \frac{B^2}{(A \ln \pi)^2} \int_a^b \pi^{Ax} \sin Bx \, dx = \\ &= \frac{1}{A \ln \pi} (\pi^{Ab} \sin Bb - \pi^{Aa} \sin Ba) - \\ &- \frac{B}{(A \ln \pi)^2} (\pi^{Ab} \cos Bb - \pi^{Aa} \cos Ba) - \frac{B^2 I}{(A \ln \pi)^2}: \end{aligned}$$

Այստեղից կունենանք՝

$$I = \frac{1}{(A \ln \pi)^2 + B^2} [A \ln \pi (\pi^{Ab} \sin Bb - \pi^{Aa} \sin Ba) - B(\pi^{Ab} \cos Bb - \pi^{Aa} \cos Ba)]; \quad (1.1.20)$$

Օրինակ 3. Հաշվել որոշյալ ինտեգրալը՝

$$I = \int_a^b \sin Ax \cdot \sin Bx \, dx = ?:$$

Այս տիպի որոշյալ ինտեգրալը հաշվելու համար օգտվենք եռանկյունաչափական ներքոգրյալ բանաձևերից՝

$$\begin{cases} \cos(\alpha - \beta) = \cos \alpha \cos \beta + \sin \alpha \sin \beta; \\ \cos(\alpha + \beta) = \cos \alpha \cos \beta - \sin \alpha \sin \beta; \end{cases} \Rightarrow \\ \Rightarrow \begin{cases} 2\cos \alpha \cos \beta = \cos(\alpha - \beta) + \cos(\alpha + \beta); \\ 2\sin \alpha \sin \beta = \cos(\alpha - \beta) - \cos(\alpha + \beta); \end{cases}$$

Հետևաբար դիտարկվող ինտեգրալի համար կունենանք՝

$$\begin{aligned} I &= \int_a^b \sin Ax \cdot \sin Bx \, dx = \frac{1}{2} \int_a^b [\cos(A - \beta)x - \cos(A + B)x] \, dx = \\ &= \frac{1}{2} \int_a^b \cos(A - B)x \, dx - \frac{1}{2} \int_a^b \cos(A + B)x \, dx = \\ &= \left[\frac{\sin(A - B)x}{2(A - B)} - \frac{\sin(A + B)x}{2(A + B)} \right] \Big|_{x=a}^{x=b} : \end{aligned}$$

Այսինքն կստանանք՝

$$\begin{aligned} I &= \frac{\sin(A - \beta)b - \sin(A - \beta)a}{2(A - \beta)} - \\ &- \frac{\sin(A + \beta)b - \sin(A + \beta)a}{2(A + \beta)} : \end{aligned} \quad (1.1.21)$$

Օրինակ 4. Հաշվել որոշյալ ինտեգրալը՝

$$I = \int_a^b e^{\omega x} \sin Ax \cdot \cos Bx \, dx = ? :$$

Այս որոշյալ ինտեգրալը հաշվվում է այն նույն սկզբունքով (ինչպես **Օրինակ 3**-ում) եռանկյունաչափական հետևյալ բանաձևերից՝

$$\begin{aligned} &\begin{cases} \sin(\alpha + \beta) = \sin \alpha \cos \beta + \cos \alpha \sin \beta \\ \sin(\alpha - \beta) = \cos \alpha \cos \beta - \sin \alpha \sin \beta \end{cases} \Rightarrow \\ &\Rightarrow \begin{cases} 2\sin \alpha \cos \beta = \sin(\alpha + \beta) + \sin(\alpha - \beta) \\ 2\cos \alpha \sin \beta = \sin(\alpha - \beta) - \sin(\alpha + \beta) \end{cases} : \end{aligned} \quad (1.1.22)$$

Օգտվելով (1.1.15)-ի եռանկյունաչափական բանաձևերից՝

$$\begin{aligned} I &= \int_a^b e^{\omega x} \sin Ax \cdot \cos Bx \, dx = \\ &= \frac{1}{2} \int_a^b e^{\omega x} [\sin(A+B)x + \sin(A-B)x] \, dx = \\ &= \frac{1}{2} \int_a^b e^{\omega x} \sin(A+B)x \, dx + \frac{1}{2} \int_a^b e^{\omega x} \sin(A-B)x \, dx = I^+ + I^-, \end{aligned}$$

որտեղ՝

$$\begin{aligned} I^+ &= \frac{1}{2} \int_a^b e^{\omega x} \sin(A+B)x \, dx = \frac{1}{2\omega} \int_a^b \sin(A+B)x \, de^{\omega x} = \\ &= \left[\frac{1}{2\omega} e^{\omega x} \sin(A+B)x \right]_{x=a}^{x=b} - \\ &- \frac{A+B}{2\omega} \int_a^b e^{\omega x} \cos(A+B)x \, dx = \\ &= \frac{1}{2\omega} [e^{\omega b} \sin(A+B)b - e^{\omega a} \sin(A+B)a] - \\ &- \frac{A+B}{2\omega^2} \cdot [e^{\omega b} \cos(A+B)b - e^{\omega a} \cos(A+B)a] - \\ &- \frac{(A+B)^2}{2\omega^2} \int_a^b e^{\omega x} \sin(A+B)x \, dx: \end{aligned}$$

Այստեղից կունենանք՝

$$\begin{aligned} I^+ &= \frac{1}{(A+B)^2} \{ \omega [e^{\omega b} \sin(A+B)b - e^{\omega a} \sin(A+B)a] - \\ &- (A+B) [e^{\omega b} \cos(A+B)b - e^{\omega a} \cos(A+B)a] \}: \end{aligned}$$

Անալոգ սկզբունքով կատանանք՝

$$I^- = \frac{1}{(A-B)^2} \{ \omega [e^{\omega b} \sin(A+B)b - e^{\omega a} \sin(A-B)a] - \\ - (A-B)[e^{\omega b} \cos(A-B)b - e^{\omega a} \cos(A-B)a] \}:$$

Հետևաբար՝

$$I = \frac{1}{(A+B)^2} \{ \omega [e^{\omega b} \sin(A+B)b - e^{\omega a} \sin(A+B)a] - \\ - (A+B)[e^{\omega b} \cos(A+B)b - e^{\omega a} \cos(A+B)a] \} + \quad (1.1.23) \\ + \frac{1}{(A-B)^2} \{ \omega [e^{\omega b} \sin(A+B)b - e^{\omega a} \sin(A-B)a] - \\ - (A-B)[e^{\omega b} \cos(A-B)b - e^{\omega a} \cos(A-B)a] \}:$$

Օրինակ 5. Հաշվել որոշյալ ինտեգրալը՝

$$I = \int_a^b \pi^{\omega x} (Ax^2 + Bx + C) dx = \int_a^b e^{\omega x \ln \pi} (Ax^2 + Bx + C) dx = \\ = \frac{1}{\omega \ln \pi} \int_a^b (Ax^2 + Bx + C) de^{\omega x \ln \pi} = \\ = \left[\frac{1}{\omega \ln \pi} \pi^{\omega x} (Ax^2 + Bx + C) \right]_{x=a}^{x=b} - \\ - \frac{1}{\omega \ln \pi} \int_a^b e^{\omega x \ln \pi} (2Ax + B) dx = \\ = \frac{\pi^{\omega b} (Ab^2 + Bb + C) - \pi^{\omega a} (Aa^2 + Ba + C)}{\omega \ln \pi} - \\ - \frac{\pi^{\omega b} (2Ab + B) - \pi^{\omega a} (2Aa + B)}{(\omega \ln \pi)^2} + \frac{2A\pi^{\omega x}}{(\omega \ln \pi)^3} \Big|_{x=a}^{x=b} :$$

Այստեղից կստանանք՝

$$I = \frac{\pi^{\omega b}}{(\omega \ln \pi)^3} [(Ab^2 + Bb + C)(\omega \ln \pi)^2 - (2Ab + B)\omega \ln \pi + 2A] - \\ - \frac{\pi^{\omega a}}{(\omega \ln \pi)^3} [(Aa^2 + Ba + C)(\omega \ln \pi)^2 - (2Aa + B)\omega \ln \pi + 2A]:$$

Առաջադրանք

Հաշվել որոշյալ ինտեգրալները:

$$1. \int_1^9 \left\{ 2(9 - x^2) - \frac{3}{\sqrt{2x+1}} + \frac{x+2}{\sqrt{x+1}} - 5e^x + \frac{7x}{2+x^2} + \right. \\ \left. + 9\sqrt{x^2-4} - 7 \cdot 3^x - \frac{5x}{\sqrt{16+x^2}} \right\} dx =;$$

$$2. \int_0^{\pi/2} \left\{ 7 \sin \left(3x + \frac{\pi}{4} \right) + 5 \cos \left(2x - \frac{\pi}{3} \right) - 3x \sin \left(4x + \frac{\pi}{6} \right) - \right. \\ \left. - 9x^2 \cos \left(5x - \frac{2\pi}{3} \right) + \operatorname{tg} x \right\} dx =;$$


$$3. \int_0^3 \left\{ \ln(2x+1) - \frac{\ln(x+3)}{2e^x} + \frac{3 \ln^2 x}{2^x} \right\} dx =;$$

$$4. \int_0^{\pi/2} \left\{ \frac{x \cos 3x}{1 - \cos 6x} - \frac{1}{1 + \cos 2x} \right\} dx =;$$

$$5. \int_0^3 \left\{ 24\sqrt{4x^2+1} - 93 \cos 2(\pi + 5x) + 5 \ln(3x+1) + 13 \cdot 2^x - \right. \\ \left. - 35 \cdot \pi^{2x} - 31 \operatorname{tg}^2 2x \right\} dx =;$$

§ 1.2. Որոշյալ ինտեգրալի կիրառությունը ֆիզիկայի խնդիրներում

Խնդիր 1.2.1. Հաշվել այն աշխատանքը, որն անհրաժեշտ է R շառավղով կլիսագնդաձև ջրամբարից ջուրը դատարկելու համար:



Լուծում

Դիտարկենք ջրամբարի տրամագծային հատույթ և վերցնենք այդտեղ xOy ուղղանկյուն կոորդինատական համակարգ, ինչպես ցույց է տրված Նկար 2.1-ում: ox առանցքին ուղղահայաց հարթությունների օգնությամբ, որոնք $[O; R]$ հատվածից կանջատեն x_k կետեր ($0 = x_0 < x_1 < \dots < x_n$), ջրամբարը մտովի տրոհենք մանր շերտերի:

Նշանակելով k -րդ շերտում եղած ջուրը դատարկելու համար պահանջվող աշխատանքը ΔA_k -ով, նույն շերտի կշիռը P_k -ով՝ կունենանք

$$x_k P_k < \Delta A_k < x_{k+1} P_k = x_k P_k + \Delta x_k \cdot P_k: \quad (1.2.1)$$

Նկատի ունենալով, որ k -րդ շերտի ծավալը՝ V -ն բավարարում է, հետևյալ անհավասարությանը

$$\begin{aligned} \pi(R^2 - x_{k+1}^2) \Delta x_k &= \pi y_{k+1}^2 \cdot \Delta x_k < V_k < \pi y_k^2 \cdot \Delta x_k = \\ &= \pi(R^2 - x_k^2) \Delta x_k, \end{aligned} \quad (1.2.2)$$

վերոգրյալ (1.1.18) ու (1.1.19) պայմաններից կստանանք՝

$$\begin{aligned} \pi(R^2 - x_{k+1}^2)x_k\Delta x_k < \Delta A_k < \pi(R^2 - x_k^2)x_k\Delta x_k + \\ + \pi(R^2 - x_k^2)(\Delta x_k)^2: \end{aligned} \quad (1.2.3)$$

Նշանակելով α -ով ու β -ով համապատասխանաբար հետևյալ արտահայտությունները՝

$$\alpha = \pi \sum_{k=0}^{n-1} (R^2 - x_k^2)(\Delta x_k)^2; \quad (1.2.4)$$

$$\beta = \pi \sum_{k=0}^{n-1} x_k(\Delta x_k)^2 [2x_k + \Delta x_k],$$

և անդամ առ անդամ գումարելով (1.1.20) անհավասարությունները՝ կստանանք՝

$$\begin{aligned} \beta + \pi \sum_{k=0}^{n-1} (R^2 - x_k^2)x_k\Delta x_k < \sum_{k=0}^{n-1} \Delta A_k < \\ < \pi \sum_{k=0}^{n-1} (R^2 - x_k^2)x_k\Delta x_k + \alpha: \end{aligned} \quad (1.2.5)$$

Հաշվի առնելով հետևյալ ներքոգրյալ առնչությունները՝

$$\alpha < \pi \max_k (\Delta x_k) \sum_{k=0}^{n-1} (R^2 - x_k^2)\Delta x_k < \pi R^2 \max_k (\Delta x_k),$$

$$\beta < 3\pi R^2 \sum_{k=0}^{n-1} \Delta x_k \cdot \max_k (\Delta x_k) < 3\pi R^3 \cdot \max_k (\Delta x_k),$$


գոյություն ունի՝

$$\lim_{\max_k (\Delta x_k) \rightarrow 0} \sum_{k=0}^{n-1} (R^2 - x_k^2)x_k\Delta x_k = \int_0^R x(R^2 - x^2) : A = \sum_{k=0}^{n-1} \Delta A_k:$$

(1.1.22) անհավասարությունում անցնելով սահմանի, երբ $\max(\Delta x_k) \rightarrow 0$, կգտնենք աշխատանքը՝

$$A = \pi \int_0^R x(R^2 - x^2) dx = \frac{\pi R^4}{4}: \quad (1.2.6)$$

Խնդիր 1.2.2. Սկավառակը ուղղաձիգ դիրքով ընկղմված է γ տեսակարար կշիռ ունեցող հեղուկի մեջ, որի հեռավորությունը հեղուկի մակերևույթից հավասար է R -ի: Հաշվել սկավառակի վրա հեղուկի ճնշման ուժը:



Լուծում

Վերցնենք ուղղանկյուն կոորդինատական համակարգ, ինչպես ցույց է տրված Նկար 2.2-ում: Այդ կոորդինատական համակարգում սկավառակի եզրագծի (շրջանագծի) հավասարումը կլինի՝

$$(x - R)^2 + y^2 = R^2 \text{ կամ } y^2 = 2Rx - x^2: \quad (1.2.7)$$

Սկավառակը տրոհենք $x = x_k$; ($0 = x_0 < x_1 < \dots < x_n = R$) զուգահեռ գծերով մանր մասերի, և k -րդ մասի մակերեսը նշանակենք S_k -ով:

Պարզ է, որ.

$$|S_k - 2y_k \cdot \Delta x_k| < 2\Delta x_k \cdot \Delta y_k,$$

որտեղ $\Delta x_k = x_{k+1} - x_k$; $y_k = \sqrt{2Rx_k - x_k^2}$; $\Delta y_k = |y_{k+1} - y_k|$:

Դիցուք α_k ; ($0 < \alpha_k < 1$)-ն այնպիսին է, որ.

$$S_k = 2y_k \cdot \Delta x_k + \alpha_k \cdot 2 \cdot \Delta x_k \cdot \Delta y_k: \quad (1.2.8)$$

Նշանակելով հեղուկի ճնշման ուժը k -րդ մասում F_k -ով, համաձայն Արքիմեդի և Պասկալի օրենքների, կունենանք՝

$$\gamma \cdot x_k \cdot g \cdot S_k < F_k < \gamma \cdot x_k \cdot g \cdot S_k, \quad (1.2.9)$$

որտեղից՝

$$F_k = \gamma \cdot x_k \cdot g \cdot S_k + \beta_k \cdot \Delta x_k \cdot \gamma \cdot g \cdot S_k; \quad (0 < \beta_k < 1):$$

Օգտվելով (1.2.8), (1.2.9) առնչություններից՝ սկավառակի վրա հեղուկի ճնշման F ուժի համար կստանանք՝

$$F = \sum_{k=0}^{n-1} F_k = 2\gamma g \sum_{k=0}^{n-1} x_k \sqrt{2Rx_k - x_k^2} \cdot \Delta x_k + \varepsilon, \quad (1.2.10)$$

որտեղ՝

$$\varepsilon = 2\gamma g \sum_{k=0}^{n-1} \alpha_k x_k \cdot \Delta x_k \cdot \Delta y_k + \gamma g \sum_{k=0}^{n-1} \beta_k S_k \cdot \Delta x_k:$$

Նկատելով, որ.

$$\lim_{\max(\Delta x_k) \rightarrow 0} \varepsilon = 0,$$

և (1.2.10) հավասարության մեջ անցնելով սահմանի՝ կգտնենք՝

$$\begin{aligned} F &= 2\gamma g \int_0^{2R} x \sqrt{2Rx - x^2} dx = \\ &= 2\gamma g \int_0^{2R} (x - R + R) \sqrt{R^2 - R^2 + 2Rx - x^2} dx = \end{aligned}$$

$$\begin{aligned}
&= 2\gamma g \int_0^{2R} (x-R)\sqrt{R^2-(x-R)^2} dx + \\
&+ 2R\gamma g \int_0^{2R} \sqrt{R^2-(x-R)^2} dx = I_1 + I_2:
\end{aligned}$$

որտեղ՝

$$I_1 = 2\gamma g \int_0^{2R} (x-R)\sqrt{R^2-(x-R)^2} dx;$$

$$I_2 = 2R\gamma g \int_0^{2R} \sqrt{R^2-(x-R)^2} dx:$$

Հաշվենք վերոգրյալ՝ I_1 և I_2 որոշյալ ինտեգրալները, այսինքն՝

$$\begin{aligned}
I_1 &= 2\gamma g \int_0^{2R} (x-R)\sqrt{R^2-(x-R)^2} dx = \\
&= -\frac{2\gamma g}{3} [R^2-(x-R)^2]^{\frac{3}{2}} \Big|_{x=0}^{x=2R} = 0:
\end{aligned}$$


$$\begin{aligned}
I_2 &= 2R\gamma g \int_0^{2R} \sqrt{R^2-(x-R)^2} dx = 2R^3\gamma g \int_{-\frac{\pi}{2}}^{\frac{\pi}{2}} \cos^2 t dt = \\
&= R^3\gamma g \int_{-\frac{\pi}{2}}^{\frac{\pi}{2}} (1 + \cos 2t) dt = \pi R^3\gamma g:
\end{aligned}$$

Հետևաբար վերջնականապես կստանանք՝ $F = \pi R^3\gamma g$:

Խնդիր 1.2.3. Հաշվել օդի ճնշման կախվածությունը երկրի մակերևույթից ունեցած բարձրությունից:

Լուծում

Ենթադրենք օդի ջերմաստիճանը՝ T -ն, անկախ է բարձրությունից, իսկ ճնշումը՝ որպես բարձրության ֆունկցիա, անընդհատ է:



Նկ. 2.3

Դիտարկենք օղի մի ուղղաձիգ սյուն:

Դիցուք երկրի մակերևույթի մոտ, որտեղ $h = 0$, ճնշումը հավասար է P_0 -ի և h բարձրության վրա $P(h)$ -ի (Նկ. 2.3):

Բարձրությունը Δh -ով փոխելիս ճնշումը կփոխվի

$$h P(h) - P(h + \Delta h) = \Delta P\text{-ով:}$$

Համաձայն Պասկալի օրենքի՝ օղի ճնշումը ցանկացած բարձրության վրա հավասար է այդ բարձրությամբ և P_0 $h = 0$ 1 սմ² հիմքի մակերեսով օղի ուղղաձիգ սյան կշռին.

Կունենանք՝

$$\begin{aligned} \Delta P &= P(h) - P(h + \Delta h) = \\ &= \rho g h - \rho g(h + \Delta h) = -\rho g \Delta h, \end{aligned} \quad (1.2.11)$$

որտեղ ρ -ն օղի խտությունն է (միավոր ծավալի զանգվածը) և g -ն՝ ծանրության ուժի արագացումը:

Ինչպես հայտնի է կլինետիկ տեսությունից, գազի ρ խտությունը հավասար է մոլեկուլի m զանգվածի և միավոր ծավալում մոլեկուլների n -թվի արտադրյալին՝

$$\rho = m \cdot n = m \cdot \frac{P(\bar{h})}{k \cdot T}, \quad (1.2.12)$$

որտեղ k -ն Բոլցմանի հաստատունն է, իսկ $\bar{h} \in [h; h + \Delta h]$:

Հաշվի առնելով (1.2.11) ու (1.2.12) արտահայտությունները՝ կստանանք՝

$$\frac{\Delta P}{\Delta h} - \frac{mg}{k \cdot T} P(\bar{h}): \quad (1.2.13)$$

Օգտվելով $P(\bar{h})$ - ֆունկցիայի անընդհատությունից և նկատի ունենալով (1.2.13)-ը՝ կստանանք, որ գոյություն ունի հետևյալ սահմանը.

$$\lim_{\Delta h \rightarrow 0} \frac{\Delta P}{\Delta h} = \frac{mg}{k \cdot T} \lim_{\Delta h \rightarrow 0} P(\bar{h}) = \frac{mg}{k \cdot T} P(h),$$

կամ, որ նույնն է՝

$$P'(h) = -\frac{mg}{k \cdot T} P(h):$$

Փոփոխականների անջատումից հետո վերջին հավասարությունը կգրվի հետևյալ տեսքով՝

$$\frac{dP}{P} = -\frac{mg}{k \cdot T},$$

որտեղից կստանանք՝ $\int_{P_0}^{P(h)} \frac{dP}{P} = -\int_0^h \frac{mg}{k \cdot T} dh$,
 հետևաբար՝

$$\ln \frac{P(h)}{P_0} = -\frac{mg}{k \cdot T} h; \Rightarrow P(h) = P_0 e^{-\frac{mg}{k \cdot T} h}: \quad (1.2.14)$$

Սահմանում 7. Բարձրության մեծացման հետ ճնշման նվազման օրենքը սահմանող (1.2.14) բանաձևը կոչվում է բարոմետրական հավասարում:

Խնդիր 1.2.4. Հաշվել ժամանակի t պահին ռադիոակտիվ տարրի չտրոհված ատոմների քանակը, եթե ժամանակի սկզբնական պահին ($t = 0$) այն N_0 է:

Լուծում

Ժամանակի t պահին ռադիոակտիվ տարրի չտրոհված ատոմների քանակը նշանակենք $N(t)$ -ով: Այդ դեպքում ժամանակի Δt պահին չտրոհված ատոմների քանակը կլինի $N(t + \Delta t)$, հետևաբար՝

$$\Delta N = N(t) - N(t + \Delta t)$$

տարբերությունը ցույց է տալիս Δt ժամանակի ընթացքում պահված ատոմների քանակը:

Մահմանում 8. Համաձայն ռադիոակտիվ տրոհման հիմնական օրենքի՝ միավոր ժամանակում տրոհված ատոմների քանակի հարաբերությունն ատոմների ընդհանուր քանակին հաստատուն մեծություն է տվյալ ռադիոակտիվ տարրի համար, որը կոչվում է տրոհման հավանականություն և նշանակվում է ω տառով:

Այստեղ ենթադրվում է, որ տրոհված ատոմների քանակը կազմում է ատոմների քանակի չնչին մասը, որի համար կստանանք՝

$$\lim_{\Delta t \rightarrow 0} \frac{\Delta N}{\Delta t \cdot N(t)} = -\omega,$$

որտեղից՝

$$\frac{N'(t)}{N(t)} = -\omega:$$

Ինտեգրելով վերջին հավասարությունը $[0; t]$ հատվածում՝ կունենանք՝

$$\int_0^t \frac{N'(t)}{N(t)} dt = -\omega \int_0^t dt:$$

Այսինքն՝


$$\ln \frac{N(t)}{N_0} = -\omega t; \quad N_0 = N(0),$$

և ուրեմն կստանանք ռադիոակտիվ տարրի չտրոհված ատոմների քանակը՝ $N(t)$ -ն որոշող բանաձևը՝ կախված t ժամանակից՝

$$N(t) = N_0 e^{-\omega t}: \quad (1.2.15)$$

Խնդիր 1.2.5. Դիցուք l երկարությամբ բարակ ձողի աջ ծայրից a հեռավորության վրա տեղավորված է մեկ A կետ՝ M զանգվածով, և ձողի զծային խտությունն է ρ -ն: Որոշել. ինչ c կետում տեղավորել ամբողջ ձողի զանգվածը, որ առաջացած

կետային զանգվածները ձգեն միմյանց նույն ուժով, ինչ ուժով ձգում են ձողին ու A կետը:



Նկ. 2.4

Լուծում

Ձողի մի կտոր, որի աջ ծայրը գտնվում է A կետից x հեռավորության վրա, իսկ ձախ ծայրը՝ $x + \Delta x$ հեռավորության վրա, կունենա $\rho \Delta x$ զանգված և կձգի A կետին մոտավորապես՝

$$k\rho \frac{M\Delta x}{x^2}$$

ուժով, որտեղ k -ն տիեզերական ձգողական ուժի հաստատունն է:

Հետևաբար ամբողջ ուժը, որով ձգում է A կետին, կլինի՝

$$F = k\rho M \int_a^{a+l} \frac{dx}{x^2} = k \frac{M\rho l}{a(a+l)}:$$

Նկատի ունենալով, որ $\rho l = m$ կլինի ձողի զանգվածը, կունենանք՝

$$F = k \frac{Mm}{a(a+l)}:$$

Նշանակելով x_c -ով A -ից ունեցած հեռավորությունն այն c կետից, ուր տեղավորված է ձողի ամբողջ զանգվածը, կստանանք՝

$$k \frac{Mm}{a(a+l)} = k \frac{Mm}{x_c^2},$$

և հետևաբար $x_c = \sqrt{a(a+l)}$:

§ 1.3. Կորագիծ ինտեգրալներին բերվող խնդիրներ

Դիցուք xoy հարթության վրա գտնվող $(L) = (AB)$ անընդ-
հատ և ուղղելի կորի վրա որոշված է $u = f(x, y)$ սահմանա-
փակ ֆունկցիան: (AB) կորը $A_k(x_k; y_k)$ կամայական կետերով
տրոհենք մասերի, յուրաքանչյուր $(A_k A_{k+1})$ աղեղի վրա վերց-
նենք $M_k(\xi_k; \eta_k)$ կամայական կետ և դիտարկենք հետևյալ
ինտեգրալային գումարները՝

$$\sum_{k=0}^{n-1} f(M_k) \Delta S_k = \sum_{k=0}^{n-1} f(\xi_k; \eta_k) \Delta S_k, \quad (1.3.1)$$

$$\sum_{k=0}^{n-1} f(M_k) \Delta x_k = \sum_{k=0}^{n-1} f(\xi_k; \eta_k) \Delta x_k, \quad (1.3.2)$$

$$\sum_{k=0}^{n-1} f(M_k) \Delta y_k = \sum_{k=0}^{n-1} f(\xi_k; \eta_k) \Delta y_k, \quad (1.3.3)$$

որտեղ ΔS_k -ն $(A_k A_{k+1})$ աղեղի երկարությունն է, իսկ

$$\Delta x_k = x_{k+1} - x_k \text{ և } \Delta y_k = y_{k+1} - y_k; (k = 0; 1; \dots; n-1)$$

նույն աղեղի պրոյեկցիաներն են ox ու oy առանցքների վրա:

Սահմանում 9. Եթե, երբ.

$$\lambda = \max_{0 \leq k \leq n} (\Delta S_k) \rightarrow 0$$

և (1.2.16), (1.2.17), (1.2.18) ինտեգրալային գումարներից
յուրաքանչյուրը ձգտում է վերջավոր սահմանի՝ անկախ (AB)
կորը տրոհելու ու M_k կետերը ընտրելու եղանակից, ապա այդ
սահմաններն անվանում ենք $f(M) = f(x, y)$ ֆունկցիայի
կորագիծ ինտեգրալներ տարված $(L) = (AB)$ կորով, և
նշանակում են հետևյալ կերպ՝

$$\int_{(L)} f(M) ds = \int_{(L)} f(x, y) ds, \quad (1.3.4)$$

$$\int_{(L)} f(M) dx = \int_{(L)} f(x, y) dx, \quad (1.3.5)$$

$$\int_{(L)} f(M) dy = \int_{(L)} f(x, y) dy: \quad (1.3.6)$$

(1.3.4) ինտեգրալն անվանում են առաջին տիպի կորագիծ ինտեգրալ, իսկ (1.3.5) ու (1.3.6) ինտեգրալները՝ երկրորդ տիպի, առաջինը՝ ըստ x -ի, իսկ երկրորդը՝ ըստ y -ի:

Տարածական կորի դեպքում նման եղանակով սահմանվում են հետևյալ կորագիծ ինտեգրալները՝

$$\begin{aligned} & \int_{(L)} f(x, y, z) ds; \int_{(L)} P(x, y, z) dx; \int_{(L)} Q(x, y) dy; \int_{(L)} R(x, y) dz, \\ & \int_{(L)} P(x, y, z) dx + Q(x, y, z) dy + R(x, y, z) dz = \\ & \equiv \int_{(L)} P dx + \int_{(L)} Q dy + \int_{(L)} R dz: \end{aligned}$$

ա) Առաջին և երկրորդ տիպի կորագիծ ինտեգրալները կապված են հետևյալ բանաձևերով՝

$$\int_{(L)} f(M) dx = \int_{(L)} f(M) \cos \alpha ds, \quad (1.3.7)$$

$$\int_{(L)} f(M) dy = \int_{(L)} f(M) \cos \beta ds, \quad (1.3.8)$$

$$\int_{(L)} f(M) dz = \int_{(L)} f(M) \cos \gamma ds, \quad (1.3.9)$$

$$\int_{(L)} P(M) dx + Q(M) dy + R(M) dz =$$

$$\equiv \int_{(L)} [P \cos \alpha + Q \cos \beta + R \cos \gamma] ds, \quad (1.3.10)$$

որտեղ α, β, γ անկյունները $M \in (L)$ կետով տարված շոշափողի կազմած անկյուններն են ox, oy, oz առանցքների դրական ուղղությունների հետ:

Հարթ կորի դեպքում՝ $\gamma = 90^\circ$:

բ) Կորագիծ ինտեգրալները հաշվվում են հետևյալ բանաձևերով:

Եթե (L) կորը տրված է պարամետրական հավասարումներով՝

$$\begin{cases} x = \varphi(t) \\ y = \psi(t) \end{cases} \quad (1.3.11)$$

ընդ որում՝ M կետը գծում է $(\widetilde{AB})$ աղեղը, երբ t -ն փոփոխվում է $\alpha \leq t \leq \beta$ միջակայքում, և գոյություն ունեն $\varphi'(t); \psi'(t)$ անընդհատ ածանցյալներ, ապա (L) -ի վրա որոշված $\forall$ անընդհատ $f(x, y)$ ֆունկցիայի համար.

$$\int_{(L)} f(x, y) ds = \int_{\alpha}^{\beta} f[\varphi(t); \psi(t)] \cdot \sqrt{[\varphi'(t)]^2 + [\psi'(t)]^2} dt, \quad (1.3.12)$$

$$\begin{cases} \int_{(L)} f(x, y) dx = \int_{\alpha}^{\beta} f[\varphi(t); \psi(t)] \cdot \varphi'(t) dt \\ \int_{(L)} f(x, y) dy = \int_{\alpha}^{\beta} f[\varphi(t); \psi(t)] \cdot \psi'(t) dt \end{cases} : \quad (1.3.13)$$

Օգտվենք կորագիծ ինտեգրալների հետևյալ **հատկությունից** (IN^*). Եթե E միակապ տիրույթում որոշված $P(x, y)$ և

$Q(x, y)$ ֆունկցիաները անընդհատ են $\frac{\partial P}{\partial y}$ և $\frac{\partial Q}{\partial x}$ մասնական ածանցյալների հետ միասին, ապա ներքոգրյալ չորս պայմաններից յուրաքանչյուրի առկայության դեպքում բավարարվում են նաև մյուսները՝

$$\text{ա) } \frac{\partial P}{\partial y} = \frac{\partial Q}{\partial x}:$$

$$\text{բ) } \int_{(L)} P(x, y) dx + Q(x, y) dy$$

կորագիծ ինտեգրալը կախված է A, B կետերի դիրքից և կախված չէ ինտեգրման ճանապարհի ձևից:

գ) E միակապ տիրույթում գտնվող ամեն մի (L) փակ կորով տարածված է՝

$$\int_{(L)} P(x, y) dx + Q(x, y) dy = 0:$$

դ) $P(x, y) dx + Q(x, y) dy$ արտահայտությունը ինչ-որ $U(x, y)$ ֆունկցիայի լրիվ դիֆերենցիալ է՝ $dU = P(x, y) dx + Q(x, y) dy$, այսինքն՝

$$\frac{\partial U}{\partial x} = P(x, y); \quad \frac{\partial U}{\partial y} = Q(x, y):$$

Հետևաբար՝

$$\int_{(L)} P(x, y) dx + Q(x, y) dy = U(B) - U(A):$$

Խնդիր 1.3.1. Ենթադրենք հարթության վրա գտնվող ուղղելի և անընդհատ (L) կորի երկայնքով $\rho(x, y)$ գծային խտությամբ բաշխված է որոշակի զանգված:

Հաշվել՝

1. (L) կորով բաշխված զանգվածը:
2. (L) կորի ստատիկ և իներցիայի մոմենտները կորորդինատային առանցքների նկատմամբ:
3. (L) կորի ծանրության կենտրոնի կորորդինատները:

Լուծում

Նախ հիշատակենք ներքոհիշյալ սահմանումները:

Սահմանում 10. P նյութական կետի k -րդ կարգի մոմենտ տրված հարթության, ուղղի կամ կետի նկատմամբ կոչվում է $m \cdot D^k$ արտադրյալը, որտեղ m -ը P նյութական կետում կենտրոնացված զանգվածն է, իսկ D -ն P կետի հեռավորությունն է նշված հարթությունից, ուղղից կամ կետից:

Նյութական կետերի համակարգի k -րդ կարգի մոմենտ սահմանվում է որպես համակարգի բոլոր կետերի համապատասխան մոմենտների գումար՝

$$\sum_{i=1}^n m_i \cdot D_i^k:$$


Սահմանում 11. Առաջին կարգի ($k = 1$) մոմենտը կոչվում է ստատիկ մոմենտ՝

$$M_{un} = \sum_{i=1}^n m_i \cdot D_i,$$

երկրորդ կարգինը՝ ($k = 2$), իներցիայի մոմենտ՝

$$M_{\text{իւ}} = \sum_{i=1}^n m_i \cdot D_i^2:$$

Խնդիր 1.3.1-ը լուծելու համար (L) կորը A_k ($k = 1; 2; \dots; n$) $\forall$ կետերով տրոհենք մասերի, յուրաքանչյուր ($A_k \widetilde{A}_{k+1}$) աղեղի վրա վերցնենք $\forall (\xi_k; \eta_k)$ կետ, և տրված աղեղով բաշխված զանգվածը շատ քիչ կտարբերվի $\rho(\xi_k; \eta_k) \Delta S_k$ -ից (Նկ. 3.1),



Նկ. 3.1

որտեղ ΔS_k -ն (A_k, A_{k+1}) աղեղի երկարությունն է, հետևաբար (L) կորով բաշխված

$$m = \sum_{k=1}^n \Delta m_k$$

զանգվածը քիչ կտարբերվի՝

$$\sum_{k=1}^n \rho(\xi_k; \eta_k) \Delta S_k$$

գումարից, և զանգվածի ճշգրիտ արժեքը կստացվի, եթե անցնենք սահմանի, երբ.

$$\max_k (\Delta S_k) \rightarrow 0:$$

Այսինքն՝

$$m = \lim_{\max_k (\Delta S_k) \rightarrow 0} \sum_{k=1}^n \rho(\xi_k; \eta_k) \Delta S_k = \int_{(L)} \rho(x, y) dS: \quad (1.3.14)$$

Կոորդինատական առանցքների նկատմամբ ստատիկ և իներցիայի մոմենտները հաշվելու համար (A_k, A_{k+1}) -ով բաշխված զանգվածը կենտրոնացնենք տվյալ աղեղի որևէ $(\xi_k; \eta_k)$ կետում և գտնենք այդ մոմենտների $M_x; M_y; J_x; J_y$ մոտավոր արժեքները՝

$$\sum_{i=1}^n \rho(\xi_k; \eta_k) \xi_i^k \Delta S_k; \sum_{i=1}^n \rho(\xi_k; \eta_k) \eta_i^k \Delta S_k; (k = 1; 2):$$

Ստատիկ աւ իներցիայի մոմենտների ճշգրիտ արժեքները կատարվեն, եթե անցնենք սահմանի, երբ.

$$\lambda = \max_k(\Delta S_k) \rightarrow 0,$$

այսինքն՝


$$\begin{cases} M_x = \lim_{\lambda \rightarrow 0} \sum_{i=1}^n \rho(\xi_i; \eta_i) \eta_i \Delta S_i = \int_{(L)} \rho(x, y) y dS, \\ M_y = \lim_{\lambda \rightarrow 0} \sum_{i=1}^n \rho(\xi_i; \eta_i) \xi_i \Delta S_i = \int_{(L)} \rho(x, y) x dS, \end{cases} \quad (1.3.15)$$

$$\begin{cases} J_x = \lim_{\lambda \rightarrow 0} \sum_{i=1}^n \rho(\xi_i; \eta_i) \eta_i^2 \Delta S_i = \int_{(L)} \rho(x, y) y^2 dS, \\ J_y = \lim_{\lambda \rightarrow 0} \sum_{i=1}^n \rho(\xi_i; \eta_i) \xi_i^2 \Delta S_i = \int_{(L)} \rho(x, y) x^2 dS: \end{cases} \quad (3.16)$$

Ծանրության կենտրոնը՝ $C(x_c; y_c)$ -ն, հայտնի է, որ սահմանվում է հետևյալ կերպ, եթե պատկերացնենք, որ տրված (L) կորով բաշխված m զանգվածը կենտրոնացված է այդ C կետում, ապա նրա ստատիկ մոմենտները $m \cdot x_c$ և $m \cdot y_c$ առանցքների նկատմամբ հավասար կլինեն (L) նյութական կորի համապատասխան ստատիկ մոմենտներին M_x ; M_y , հետևաբար՝

$$x_c = \frac{M_y}{m} = \frac{\int_{(L)} \rho(x, y) x dS}{\int_{(L)} \rho(x, y) dS}; \quad y_c = \frac{M_x}{m} = \frac{\int_{(L)} \rho(x, y) y dS}{\int_{(L)} \rho(x, y) dS}: \quad (1.3.17)$$

Խնդիր 1.3.2. Հաշվել հարթության վրա գտնվող ուղղելի և անընդհատ (L) կորի երկայնքով, $\rho(x, y)$ զծային խտությամբ բաշխված զանգվածի (նյութական կորի) ձգողական ուժը հարթության մեջ գտնվող m_0 զանգվածով M_0 նյութական կետի վրա (Նկ. 3.2):



Նկ. 3.2

Լուծում

Ցանկացած $A_k (k = 1; 2; \dots; n)$ կետերով (L) կորը տրոհենք մասերի, ապա յուրաքանչյուր $A_k \overline{A_{k+1}}$ աղեղի վրա վերցնենք $\forall M_k (\xi_k; \eta_k)$ կետ և պատկերացնենք, որ $A_k \overline{A_{k+1}}$ աղեղով բաշխված է m_k զանգվածը, որը մոտավորապես հավասար է $\rho(M_k) \Delta S_k$ -ին կենտրոնացված M_k կետում, իսկ ΔS_k -ն $A_k \overline{A_{k+1}}$ աղեղի երկարությունն է:

Յուրաքանչյուր M_k նյութական կետ M_0 նյութական կետին ձգում է նյութոնյան $\overline{F_k}$ ուժով՝

$$\overline{F_k} = \gamma \frac{m_0 m_k}{|M_0 M_k|^2} \cdot \frac{\overline{M_0 M_k}}{|M_0 M_k|},$$

որի պրոյեկցիաները առանցքների վրա կլինեն՝

$$F_{xk} = \gamma \frac{m_0 m_k}{r_k^2} \cdot \cos \theta_k; \quad F_{yk} = \gamma \frac{m_0 m_k}{r_k^2} \cdot \sin \theta_k,$$

որտեղ $r_k = |M_0 M_k|$ և θ_k -ն $\overline{M_0 M_k}$ վեկտորի կազմած անկյունն է ox առանցքի հետ:

(L) նյութական կորի ձգողական $\vec{F}$ ուժը M_0 նյութական կետի վրա մոտավորապես հավասար կլինի՝

$$\sum_{k=1}^n \vec{F}_k:$$

Հետևաբար նյութոնյան $\vec{F}$ ուժի F_{xk} ; F_{yk} պրոյեկցիաները համապատասխանաբար ox և oy առանցքների վրա մոտավորապես հավասար են

$$\gamma m_0 \sum_{k=1}^n \frac{\rho(\xi_k; \eta_k) \Delta S_k}{r_k^2} \cos \theta_k; \gamma m_0 \sum_{k=1}^n \frac{\rho(\xi_k; \eta_k) \Delta S_k}{r_k^2} \sin \theta_k:$$

Նյութոնյան $\vec{F}$ ուժի ճշգրիտ արժեքները կստացվեն, եթե անցնենք սահմանի, երբ

$$\lambda = \max_k(\Delta S_k) \rightarrow 0,$$

այսինքն՝


$$\begin{cases} F_x = \lim_{\lambda \rightarrow 0} \gamma m_0 \sum_{k=1}^n \frac{\rho(\xi_k; \eta_k) \Delta S_k}{r_k^2} \cos \theta_k = \gamma m_0 \int_{(L)} \frac{\rho(x, y)}{r^2} \cos \theta dS \\ F_y = \lim_{\lambda \rightarrow 0} \gamma m_0 \sum_{k=1}^n \frac{\rho(\xi_k; \eta_k) \Delta S_k}{r_k^2} \sin \theta_k = \gamma m_0 \int_{(L)} \frac{\rho(x, y)}{r^2} \sin \theta dS \end{cases} : (1.3.18)$$

Դիտարկենք հետևյալ օրինակները:

Օրինակ 1. Գտնել R շառավիղով համասեռ ($\rho = 1$) կիսաշրջանագծի ձգողական ուժը կենտրոնում տեղադրված միավոր զանգվածի վրա:

Լուծում

Կոորդինատական սկզբնակետը համարենք կիսաշրջանի կենտրոնը, իսկ առանցքներն ուղղենք այնպես, ինչպես ցույց է տրված Նկար 3.3-ում:



Նկ. 3.3

Միմետրիկության պատճառով ձգողական $\vec{F}$ ուժի F_x պրոյեկցիան հավասար է 0-ի:

Ըստ 3.18 բանաձևի՝

$$\text{Նկ. 3.3 } F_y = \int_{(L)} \frac{\sin \theta}{R^2} dS = \int_0^\pi \frac{R \sin \theta}{R^2} d\theta = \frac{2}{R}:$$

Օրինակ 2. Դիտարկենք նույն օրինակը, երբ $\rho = \cos A\theta$: Այդ դեպքում կունենանք՝

$$\begin{aligned} F_y &= \int_{(L)} \frac{\sin \theta}{R^2} dS = \int_0^\pi \frac{R \cos A\theta \sin \theta}{R^2} d\theta = \\ &= \frac{1}{2R} \int_0^\pi [\sin(1+A)\theta + \sin(1-A)\theta] d\theta = \\ &= \frac{1}{2R} \left[\frac{\cos(1+A)\theta}{(1+A)} + \frac{\cos(1-A)\theta}{(1-A)} \right]_{\theta=0}^{\theta=\pi} = \\ &= \frac{1}{2R} \left[\frac{1 - \cos(1+A)\theta}{(1+A)} + \frac{1 - \cos(1-A)\theta}{(1-A)} \right]: \end{aligned}$$

Օրինակ 3. Դիտարկենք նույն օրինակը, երբ $\rho = e^{B\theta} \cos A\theta$: Այդ դեպքում ձգողական $\vec{F}$ ուժի F_y պրոյեկցիան կորոշվի հետևյալ կերպ՝

$$\begin{aligned}
F_y &= \int \frac{e^{B\theta} \cos A\theta \sin \theta}{R^2_{(L)}} dS = \int_0^\pi \frac{Re^{B\theta} \cos A\theta \sin \theta}{R^2} d\theta = \\
&= \frac{1}{2R} \int_0^\pi e^{B\theta} [\sin(1+A)\theta + \sin(1-A)\theta] d\theta = \\
&= \frac{1}{2R} \left[\int_0^\pi e^{B\theta} \sin(1+A)\theta d\theta + \int_0^\pi e^{B\theta} \sin(1-A)\theta d\theta \right] = \\
&= \frac{1}{2R} (F_{y1} + F_{y2}),
\end{aligned}$$

որտեղ՝

$$\begin{aligned}
F_{y1} &= \int_0^\pi e^{B\theta} \sin(1+A)\theta d\theta = \frac{1}{B} \int_0^\pi \sin(1+A)\theta de^{B\theta} = \\
&= \left[\frac{1}{B} e^{B\theta} \sin(1+A)\theta \right]_{\theta=0}^{\theta=\pi} - \\
&- \frac{1+A}{B} \int_0^\pi e^{B\theta} \cos(1+A)\theta d\theta = \frac{e^{B\pi} \sin(1+A)\pi}{B} - \\
&- \left[\frac{e^{B\theta} (1+A) \cos(1+A)\theta}{B^2} \right]_{\theta=0}^{\theta=\pi} - \left(\frac{1+A}{B} \right)^2 F_{y1},
\end{aligned}$$

այսինքն՝

$$F_{y1} = \frac{e^{B\pi} [B \sin(1+A)\pi - (1+A) \cos(1+A)\pi] - 1}{B^2 + (1+A)^2},$$

անալոգ սկզբունքով կստանանք՝

$$F_{y2} = \frac{e^{B\pi} [B \sin(1-A)\pi - (1-A) \cos(1-A)\pi] - 1}{B^2 + (1-A)^2}.$$

Հետևաբար՝

$$\begin{aligned}
F_y &= \frac{e^{B\pi} [B \sin(1+A)\pi - (1+A) \cos(1+A)\pi] - 1}{B^2 + (1+A)^2} + \\
&+ \frac{e^{B\pi} [B \sin(1-A)\pi - (1-A) \cos(1-A)\pi] - 1}{B^2 + (1-A)^2};
\end{aligned}$$

Օրինակ 4. Դիտարկենք նույն օրինակը, երբ $\rho = \delta^{C\theta} \cos A\theta \cos B\theta$: Այդ դեպքում կունենանք՝

$$\begin{aligned}
 F_y &= \int \frac{\delta^{C\theta} \cos A\theta \cos B\theta \sin \theta}{R_{(L)}^2} dS = \int_0^\pi \frac{R \delta^{C\theta} \cos A\theta \cos B\theta \sin \theta}{R^2} d\theta = \\
 &= \frac{1}{2R} \int_0^\pi e^{C\theta \ln \delta} \cos(A+B)\theta \sin \theta d\theta + \\
 &\quad + \int_0^\pi e^{C\theta \ln \delta} \cos(A-B)\theta \sin \theta d\theta = \\
 &= \frac{1}{2R} \int_0^\pi e^{C\theta \ln \delta} [\sin(1+A+B)\theta + \\
 &\quad + \sin(1-A-B)\theta + \sin(1+A-B)\theta + \sin(1-A+B)\theta] d\theta = \\
 &= F_y = F_{y1} + F_{y2} + F_{y3} + F_{y4},
 \end{aligned}$$

որտեղ՝

$$\begin{aligned}
 F_{y1} &= \frac{1}{2R} \int_0^\pi e^{C\theta \ln \delta} \sin(1+A+B)\theta d\theta = \\
 &= \frac{1}{2RC \ln \pi} \int_0^\pi \sin(1+A+B)\theta de^{C\theta \ln \pi} = \\
 &= \{\delta^{C\pi} [C \ln \pi \cdot \sin(1+A+B)\pi - (1+A+B) \cdot \cos(1+A+B)\pi] + \\
 &\quad + 1 + A + B\}^{-1} \cdot \{2R[(1+A+B)^2 + (C \ln \delta)^2]\}; \\
 F_{y2} &= \frac{1}{2R} \int_0^\pi e^{C\theta \ln \delta} \sin(1-A-B)\theta d\theta = \\
 &= \frac{1}{2RC \ln \pi} \int_0^\pi \sin(1-A-B)\theta de^{C\theta \ln \delta} = \\
 &= \{\delta^{C\pi} [C \ln \pi \cdot \sin(1-A-B)\pi - (1+A+B) \cdot \cos(1-A-B)\pi] + \\
 &\quad + 1 - A - B\}^{-1} \cdot \{2R[(1-A-B)^2 + (C \ln \delta)^2]\};
 \end{aligned}$$

$$\begin{aligned}
F_{y3} &= \frac{1}{2R} \int_0^\pi e^{C\theta \ln \delta} \sin(1 + A - B)\theta \, d\theta = \\
&= \frac{1}{2RC \ln \pi} \int_0^\pi \sin(1 + A - B)\theta \, de^{C\theta \ln \delta} = \\
&+ \{\delta^{C\pi} [C \ln \pi \cdot \sin(1 + A - B)\pi - (1 + A - B) \cdot \cos(1 + A + B)\pi] + \\
&\quad + 1 + A - B\}^{-1} \cdot \{2R[(1 + A - B)^2 + (C \ln \delta)^2]\};
\end{aligned}$$

$$\begin{aligned}
F_{y4} &= \frac{1}{2R} \int_0^\pi e^{C\theta \ln \delta} \sin(1 - A + B)\theta \, d\theta = \\
&= \frac{1}{2RC \ln \pi} \int_0^\pi \sin(1 - A + B)\theta \, de^{C\theta \ln \delta} = \\
&+ \{\delta^{C\pi} [C \ln \pi \cdot \sin(1 - A + B)\pi - (1 + A + B) \cdot \cos(1 - A + B)\pi] + \\
&\quad + 1 + A - B\}^{-1} \cdot \{2R[(1 - A + B)^2 + (C \ln \delta)^2]\};
\end{aligned}$$

Ենթադրենք, որ հարթության մեջ գտնվող յուրաքանչյուր $M(x; y)$ կետի վրա ազդում է որոշակի $\vec{F}$ նյութական ուժ՝ կախված միայն կետի դիրքից: Այդ դեպքում ասում են, որ հարթության վրա տրված է ուժային դաշտ՝ $\vec{F}(x; y)$ լարվածությամբ:


Եթե $\exists$ այնպիսի $U(x; y)$ ֆունկցիա, որը բոլոր կետերի համար բավարարում է հետևյալ՝

$$dU(x; y) = F_x(x; y)dx + F_y(x; y)dy \quad (1.3.19)$$

պայմանը, ապա դաշտը կոչվում է պոտենցյալ դաշտ, իսկ $U(x; y)$ -ը՝ պոտենցյալ:

Խնդիր 1.3.3. Դիցուք $\vec{F}(x; y)$ ուժային դաշտում $M(x; y)$ կետը B դիրքից տեղափոխվել է C դիրք (L) անընդհատ և ուղղելի կորով (ճանապարհով) (Նկ. 3.3):

Հաշվել կատարված աշխատանքը:



Նկ. 3.3

Լուծում

$(L) = (BC)$ կորը M_k կամայական կետերով տրոհենք մանր մասերի՝ $M_k \overline{M_{k+1}}$: Այդ աղեղները ընդունենք մոտավորապես ուղիղ հատվածներ

$$\Delta S_k = |M_k \overline{M_{k+1}}|$$

Երկարություններով: Ընդունենք, որ $\vec{F}$ ուժը յուրաքանչյուր $M_k \overline{M_{k+1}}$ աղեղի համար մնում է հաստատուն. պահպանում է աղեղի մի որևէ կետում, ասենք թե հենց M_k կետում ընդունած

$$\vec{F}(M_k) = \vec{F}(x_k; y_k)$$

արժեքը: Այդ դեպքում $M_k \overline{M_{k+1}}$ տեղամասի վրա ծախսված ΔA_k աշխատանքը հավասար է մոտավորապես՝

$$F(M_k) \Delta S_k \cos \theta_k - \text{ին,}$$

որտեղ θ_k -ն M_k կետում $\vec{F}$ վեկտորի և կորի շոշափողի կազմած անկյունն է: Հետևաբար M -կետը B դիրքից C դիրքը (L) տեղափոխելու վրա $\vec{F}$ ուժային դաշտի կատարած A աշխատանքը կորոշվի հետևյալ՝

$$A = \lim_{\max_k(\Delta S_k) \rightarrow 0} \sum_{k=1}^n F(M_k) \cos \theta_k \Delta S_k = \int_{(L)} F(M) \cos \theta dS \quad (1.3.20)$$

բանաձևով, որտեղ θ -ն փոփոխական M կետում $\vec{F}(M)$ ուժի և (L) կորի շոշափողի կազմած անկյունն է:

Եթե յուրաքանչյուր M կետում φ -ով և α -ով նշանակենք համապատասխանաբար $\vec{F}$ ուժի ու շոշափողի կազմած անկյուններն ox առանցքի հետ, կունենանք՝

$$\begin{aligned} F(x; y) \cos \theta &= F(x; y) \cos(\varphi - \alpha) = F(x; y) \cos \varphi \cos \alpha + \\ &+ F(x; y) \sin \varphi \sin \alpha = \\ &= F_x(x; y) \cos \alpha + F_y(x; y) \sin \alpha: \end{aligned} \quad (1.3.21)$$

Օգտվելով առաջին և երկրորդ ինտեգրալների կապից՝ կստանանք՝

$$A = \int_{(BC)} F_x(x; y) dx + F_y(x; y) dy: \quad (1.3.22)$$

Դիցուք $U(x; y)$ -ը՝ $\vec{F}$ ուժային դաշտի պոտենցյալը բավարարում է (1.3.19) պայմանը:

Օգտվելով կորագիծ ինտեգրալների հատկությունից՝ կստանանք, որ պոտենցյալ դաշտում M կետը B դիրքից C դիրքը տեղափոխելու վրա ծախսված աշխատանքը, անկախ տեղափոխման ճանապարհի ձևից, կախված է միայն սկզբնական ու վերջնական դիրքից և հավասար է պոտենցյալների տարբերությանը՝

$$A = U(C) - U(B)$$

Դիտարկվող խնդիրը պարզաբանենք հետևյալ օրինակով:

Օրինակ 4. Ենթադրենք կոորդինատների $O(0; 0)$ սկզբնակետում տեղադրված է q մեծությամբ լիցք: Ինչպես հայտնի է, այն իր շուրջն ստեղծում է էլեկտրական դաշտ, յուրաքանչյուր M կետում տեղադրված միավոր լիցքի վրա ազդում է Կուլոնյան ուժով՝

$$\vec{F} = k \frac{q}{r^2} \cdot \overrightarrow{OM},$$

որտեղ $r = \sqrt{x^2 + y^2}$ -ը M կետի հեռավորությունն է սկզբնակետից, k -ն հաստատուն մեծություն է:

Կատանանք ուժային դաշտ՝ $\vec{F}(M) = \vec{F}(x; y)$ լարվածությամբ, որի պրոյեկցիաները առանցքների վրա կլինեն՝

$$\begin{cases} F_x(x; y) = k \frac{q}{r^2} \cdot \cos \varphi = k \frac{q}{r^2} \cdot \frac{x}{r} = k \frac{q}{r^3} x, \\ F_y(x; y) = k \frac{q}{r^2} \cdot \sin \varphi = k \frac{q}{r^2} \cdot \frac{y}{r} = k \frac{q}{r^3} y: \end{cases} \quad (1.3.23)$$

Նկատենք, որ $\vec{F}$ - Կուլոնյան դաշտը պոտենցյալ դաշտ է:

Իրոք, $U(x; y) = -qkr^{-1}$ ֆունկցիան բավարարում է հետևյալ պայմանները՝

$$\frac{\partial U}{\partial x} = kq \frac{x}{r^3} = F_x(x; y); \quad \frac{\partial U}{\partial y} = kq \frac{y}{r^3} = F_y(x; y),$$

որտեղից հետևում է, որ.

$$DU(x; y) = F_x(x; y)dx + F_y(x; y)dy:$$

Հետևաբար միավոր լիցքը B դիրքից C դիրքը տեղափոխելու համար (Նկ. 3.3) դաշտի կատարած աշխատանքը կախված է սկզբնական և վերջնական դիրքից, այլ ոչ թե տեղափոխման ճանապարհից, այսինքն՝

$$A = U(C) - U(B) = \frac{qk}{r_B} - \frac{qk}{r_C}: \quad (1.3.24)$$

որտեղ r_B և r_C -ն B և C կետերի հեռավորություններն են սկզբնակետից:

Մասնավորապես, եթե (1.3.24) բանաձևում r_C ձգտի ∞ , կստանանք՝

$$A = \frac{qk}{r_B}, \quad (1.3.25)$$

Այսինքն՝ միավոր q լիցքը անվերջ հեռու կետից B կետը տեղափոխելու համար պետք է կատարել (1.3.25)-ով որոշվող աշխատանք:

Հաջորդ խնդիրը ձևակերպելու և իմաստը պարզելու համար հիշենք հետևյալ սահմանումը:

Սահմանում 11. Հեղուկի շարժումը անվանում են հարթ, եթե.

ա) հեղուկի յուրաքանչյուր մասնիկի արագությունը կախված է միայն իրեն դիրքից, անկախ է ժամանակից:


բ) գոյություն ունի այնպիսի α_0 հարթություն, որին ուղղահայաց միևնույն ուղղի վրա գտնվող բոլոր մասնիկները շարժվում են միևնույն արագությամբ:

Ակնհայտ է, որ հեղուկի հարթ շարժումն ուսումնասիրելիս բավական է դիտարկել միայն α_0 հարթության մեջ գտնվող բոլոր մասնիկների շարժումը:

Խնդիր 1.3.4. Հաշվել միավոր ժամանակում հարթության մեջ գտնվող անընդհատ և ուղղելի (L) կորով հոսած չտեղմվող հեղուկի քանակությունը, եթե մասնիկի արագությունը $\vec{V}(x; y)$ է:

Լուծում

Արագության վեկտորի պրոյեկցիաներն առանցքների վրա նշանակենք V_x և V_y , իսկ (L) նորմալի վրա V_n -ով, ինչպես տրված է Նկար 3.4-ում:



Նկ. 3.4

Արագության վեկտորի պրոյեկցիաները արտահայտվում են հետևյալ բանաձևով՝

$$V_x = V \cos \varphi ; V_y = V \sin \varphi , \quad (1.3.26)$$

որտեղ φ -ն $\vec{V}$ վեկտորի կազմած անկյունն է ox առանցքի հետ:

Պատկերացնենք, որ $A_k \overline{A_{k+1}}$ աղեղի յուրաքանչյուր կետում արագությունը նույնն է, ինչ A_k կետում: Քանի որ հեղուկը չսեղմվող է, միավոր ժամանակում $A_k \overline{A_{k+1}}$ աղեղով հոսած հեղուկի քանակությունը մոտավորապես հավասար է $A_k A'_k A'_{k+1} A_{k+1}$ զուգահեռագծի մակերեսին, որը քիչ է տարբերվում $V_n \Delta S_k$ -ից:

Հետևաբար միավոր ժամանակում (L) կորով հոսած չսեղմվող հեղուկի Q քանակը մոտավորապես հավասար է՝

$$\sum_{k=1}^n V_n \Delta S_k:$$

Այդ դեպքում Q -ն վերջապես կորոշվի հետևյալ կերպ՝

$$Q = \lim_{\max_k(\Delta S_k) \rightarrow 0} \sum_{k=1}^n V_n \Delta S_k = \int_{(L)} V_n(x; y) dS: \quad (1.3.27)$$

Նշանակելով α -ով յուրաքանչյուր $M \in (L)$ կետում $\vec{n}$ նորմալի ox առանցքի, β -ով $\vec{V}$ վեկտորի և $\vec{n}$ նորմալի հետ կազմած անկյուններն ու օգտվելով (1.3.26) ու (1.3.27) պայմաններից՝

$$\begin{aligned} Q &= \int_{(L)} V(x; y) \cos \beta dS = \\ &= \int_{(L)} [V(x; y) \cos \varphi \cos \alpha + V(x; y) \sin \varphi \sin \alpha] dS = \\ &= \int_{(L)} [V_x(x; y) \cos \alpha + V_y(x; y) \sin \alpha] dS: \end{aligned} \quad (1.3.28)$$

Ստացված առաջին տիպի կորագիծ ինտեգրալը բերենք երկրորդ տիպի կորագիծ ինտեգրալի՝ (L) կորի ընտրությունն

անելով այնպես, որ տրված շոշափողի դրական ուղղության և արդեն ընտրված նորմալի կազմած անկյունը լինի $\pi/2$:

$$Q = \int_{(L)} V_x(x; y) dx - V_y(x; y) dy: \quad (1.3.29)$$

Եթե (L) -ը կոնտուր է (փակ կոր է), ապա (L) կորի դրական ուղղության ընտրության դեպքում պետք է նորմալն ուղղված լինի այդ կորով առանձնացված տիրույթի ներսը: Այդ դեպքում (1.3.29) բանաձևը կորոշի հեղուկի այն քանակը, որը կհոսի (L) կոնտուրով սահմանափակված տիրույթի ներսը միավոր ժամանակում:

Կոնտուրով սահմանափակված տիրույթի ներսից արտահոսած հեղուկի քանակը հաշվելու համար պետք է (1.3.27) բանաձևում փոխել նշանը՝ վերցնելով նորմալի հակառակ ուղղությունը: Եթե արագությունների $\vec{V}$ դաշտում հեղուկի աղբյուրներ չկան, ապա (1.3.29) ինտեգրալի արժեքը կամայական կորով հավասար կլինի զրոյի, ինչքան ներհոսում է (L) կոնտուրով սահմանափակված տիրույթ, այնքան էլ արտահոսում է, այսինքն՝

$$Q = \int_{(L)} V_x(x; y) dx - V_y(x; y) dy = 0,$$

որտեղից, ըստ (IN^*) **հատկության**, կհետևի, որ $\vec{V}$ վեկտոր-ֆունկցիայի $V_x(x; y)$, $V_y(x; y)$ բաղադրիչները բավարարում են հետևյալ պայմանը՝

$$\frac{\partial V_x}{\partial y} + \frac{\partial V_y}{\partial x} = 0,$$

որն իր հերթին կապահովի $\Phi(x; y)$ ֆունկցիայի գոյությունը՝

$$d\Phi(x; y) = V_x(x; y) dx - V_y(x; y) dy:$$

Դիտարկված դեպքում կամայական A և B կետերը միացնող (AB) կորով հոսած չսեղմվող հեղուկի քանակությունը

միավոր ժամանակում կախված չէ կորի ձևից և հավասար է $\Phi(x; y)$ հոսքի ֆունկցիայի արժեքների տարբերությանը՝

$$Q = \int_{(AB)} V_x(x; y) dx - V_y(x; y) dy = \Phi(B) - \Phi(A): \quad (1.3.30)$$

§ 1.4. Կրկնակի և եռակի ինտեգրալներ

Ենթադրենք xoy հարթությունում գտնվող քառակուսի (S) տիրույթում որոշված է $f(M) = f(x; y)$ սահմանափակ ֆունկցիան: (S) տիրույթը ողորկ կորերի՝ օգնությամբ կամայական եղանակով տրոհենք մանր մասերի՝ ΔS_k ($k = 1; 2; \dots; n$), այդ ΔS_k -ում վերցնենք $M_k(x_k; y_k)$ կետ և կազմենք հետևյալ ինտեգրալային գումարը՝

$$\sum_{k=1}^n f(x_k; y_k) |\Delta S_k|:$$

Սահմանում 12. Անկախ (S) տիրույթը տրոհելու և $M_k(x_k; y_k)$ կետերն ընտրելու եղանակից՝ եթե գոյություն ունի հետևյալ սահմանը՝

$$\lim_{\lambda \rightarrow 0} \sum_{k=1}^n f(x_k; y_k) |\Delta S_k|,$$

որտեղ λ -ն ΔS_k -երի առավելագույն տրամագիծն է, ապա $f(x; y)$ ֆունկցիան ինտեգրելի է (S) տիրույթում, և ինտեգրալային գումարների սահմանն անվանում են այդ ֆունկցիայի կրկնակի ինտեգրալ տարածված (S): Այդ ինտեգրալը նշանակում են հետևյալ կերպ՝

$$\iint_{(S)} f(M) dS = \iint_{(S)} f(x; y) dx dy: \quad (1.4.1)$$

Անալոգ եղանակով սահմանվում է V տարածական խորանարդելի (V) տիրույթում որոշված $f(x; y; z)$ ֆունկցիայի եռակի ինտեգրալը՝

$$\iiint_{(V)} f(x; y; z) dx dy dz: \quad (1.4.2)$$

Լեմմա 1. Եթե $f(M)$ -ը անընդհատ ֆունկցիա է (S) տիրույթում $\{M \in (S)\}$, ապա (1.4.1) կրկնակի ինտեգրալը գոյություն ունի:


Լեմմա 2. Եթե $f(M)$ -ը անընդհատ ֆունկցիա է (V) տիրույթում $\{M \in (V)\}$, ապա (1.4.2) եռակի ինտեգրալը գոյություն ունի:

Կրկնակի ու եռակի ինտեգրալները հաշվվում են հետևյալ բանաձևերով:

1. ա. Եթե (S) -ը կորագիծ սեղանը

$$y = y_1(x); y = y_2(x); y_2(x) > y_1(x); x = a; x = b; x \in [a; b]$$

կորերով սահմանափակված տիրույթ է, իսկ $y_1(x)$ -ը և $y_2(x)$ -ը անընդհատ ֆունկցիաներ են (Նկ. 4.1), ապա՝



Նկ. 4.1

$$\iint_{(S)} f(x; y) dx dy, \quad \int_{y_1(x)}^{y_2(x)} f(x; y) dy, \quad \forall x \in [a, b]$$

ինտեգրալների գոյությունից հետևում է.

$$\int_a^b \left[\int_{y_1(x)}^{y_2(x)} f(x; y) dy \right] dx$$

ինտեգրալի գոյությունը՝

$$\iint_{(S)} f(x; y) dx dy = \int_a^b \left[\int_{y_1(x)}^{y_2(x)} f(x; y) dy \right] dx: \quad (1.4.3)$$

1. բ) Դիցուք տարածական խորանարդելի (V) տիրույթը սահմանափակված է $z = c$ և $z = d$, ինչպես նաև $\forall z = z_0$ զուգահեռ հարթություններով ($c \leq z_0 \leq d$), ընդ որում՝ այդ $z = z_0$ -ն հատում է P_{z_0} հարթ քառակուսելի տիրույթ, այդ դեպքում՝

$$\iiint_{(V)} f(x; y; z) dx dy dz = \int_c^d \left[\iint_{(P_{z_0})} f(x; y; z) dx dy \right] dz, \quad (1.4.4)$$

1.1.4 Բանաձևում ենթադրվում է եռակի ինտեգրալի և կամայական $z \in [c; d]$ -ի համար կրկնակի ինտեգրալների գոյությունը:

2. ա) Եթե (V) և (W) տարածական խորանարդելի տիրույթների միջև իրականացվում է փոխմիարժեք արտապատկերում հետևյալ՝

$$\begin{cases} x = x(\xi; \eta; \zeta), \\ y = y(\xi; \eta; \zeta), (\xi; \eta; \zeta) \in (W) \\ z = z(\xi; \eta; \zeta) \end{cases}$$

Ֆունկցիաներով, որոնք անընդհատ մասնակի ածանցյալներ ունեն, ապա (V)-ում որոշված $\forall f(x; y; z)$ անընդհատ ֆունկցիայի համար ճիշտ է

$$\begin{aligned} & \iiint_{(V)} f(x; y; z) dx dy dz = \\ &= \iiint_{(W)} f(x(\xi; \eta; \zeta); y(\xi; \eta; \zeta); z(\xi; \eta; \zeta)) \cdot |J_v| d\xi d\eta d\zeta, \end{aligned} \quad (1.4.5)$$

որտեղ $J_v = J_v(\xi; \eta; \zeta)$ -Յակոբյանն է, այսինքն՝

$$J_v(\xi; \eta; \zeta) = \begin{vmatrix} x'_\xi & x'_\eta & x'_\zeta \\ y'_\xi & y'_\eta & y'_\zeta \\ z'_\xi & z'_\eta & z'_\zeta \end{vmatrix}: \quad (1.4.6)$$

3. ք) Փոփոխականի փոխարինման բանաձև է գործում նաև կրկնակի ինտեգրալի համար՝

$$\iint_{(S)} f(x; y) dx dy = \iint_{(\Delta)} f(x(\xi; \eta); y(\xi; \eta)) |J_\Delta| d\xi d\eta,$$

որտեղ (S) -ն ու (Δ) -ը քառակուսեղի տիրույթներ են, որոնց միջև $x(\xi; \eta), y(\xi; \eta)$ անընդհատ մասնակի ածանցյալներ ունեցող ֆունկցիաների օգնությամբ իրականացվում է փոխմիարժեք արտապատկերում, $f(x; y)$ -ը անընդհատ ֆունկցիա է (S) -ից, և $J_\Delta(\xi; \eta)$ -ն Յակոբյանն է՝

$$J_\Delta(\xi; \eta) = \begin{vmatrix} x'_\xi & x'_\eta \\ y'_\xi & y'_\eta \end{vmatrix} = x'_\xi \cdot y'_\eta - x'_\eta \cdot y'_\xi: \quad (1.4.7)$$

Դժվար չէ նկատել, որ 1.1.4 ու 1.4.6 բանաձևերին կարելի է տալ այնպիսի մեխանիկական մեկնաբանություն, ինչպիսին (1.1.3)-ին:

Դիցուք m զանգվածը $\rho(x; y)$ խտությամբ անընդհատ բաշխված է xoy հարթության մեջ գտնվող (S) տիրույթով: Այդ դեպքում պատկերի m զանգվածը կորոշվի այսպես՝

$$m = \iint_{(S)} \rho(x; y) dx dy, \quad (1.4.8)$$

և ստատիկ մոմենտները կորորդինատային առանցքների նկատմամբ կորոշվեն հետևյալ բանաձևերով՝

$$\begin{cases} M_x = \iint_{(S)} \rho(x; y) y dx dy, \\ M_y = \iint_{(S)} \rho(x; y) x dx dy, \end{cases} \quad (1.4.9)$$

ինտեգրալի մոմենտները կոորդինատային ox, oy առանցքների և $o(0; 0)$ սկզբնակետի նկատմամբ ներքոգրյալ ինտեգրալներով՝

$$\begin{cases} I_x = \iint_{(S)} \rho(x; y) y^2 dx dy, \\ I_y = \iint_{(S)} \rho(x; y) x^2 dx dy, \\ I_0 = I_x + I_y = \iint_{(S)} \rho(x; y) (x^2 + y^2) dx dy: \end{cases} \quad (1.4.10)$$

Եթե m զանգվածը $\rho(x; y)$ խտությամբ անընդհատ բաշխված է տարածական (V) -ում, ապա զանգվածն ու ստատիկ մոմենտները կոորդինատական հարթությունների նկատմամբ կորոշվեն հետևյալ բանաձևերով՝

$$m = \iiint_{(V)} \rho(x; y; z) dx dy dz, \quad (1.4.11)$$

$$\begin{cases} M_{xy} = \iiint_{(V)} \rho(x; y; z) z dx dy dz, \\ M_{yz} = \iiint_{(V)} \rho(x; y; z) x dx dy dz, \\ M_{xz} = \iiint_{(V)} \rho(x; y; z) y dx dy dz: \end{cases} \quad (1.4.12)$$

Ինտեգրալի մոմենտները կոորդինատային հարթությունների նկատմամբ կլինի՝

$$\begin{cases} I_{xy} = \iiint_{(V)} \rho(x; y; z) z^2 dx dy dz, \\ I_{yz} = \iiint_{(V)} \rho(x; y; z) x^2 dx dy dz, \\ I_{xz} = \iiint_{(V)} \rho(x; y; z) y^2 dx dy dz, \end{cases} \quad (1.4.13)$$

իսկ կոորդինատային առանցքների և սկզբնակետի նկատմամբ՝

$$\begin{cases} I_x = \iiint_{(V)} \rho(x; y; z) (y^2 + z^2) dx dy dz; \\ I_y = \iiint_{(V)} \rho(x; y; z) (x^2 + z^2) dx dy dz, \\ I_z = \iiint_{(V)} \rho(x; y; z) (y^2 + x^2) dx dy dz; \\ I_0 = \iiint_{(V)} \rho(x; y; z) (x^2 + y^2 + z^2) dx dy dz: \end{cases} \quad (1.4.14)$$


Ծանրության կենտրոնի կոորդինատների համար հարթ խնդրի դեպքում կլինի՝

$$x_c = \frac{M_y}{m}; \quad y_c = \frac{M_x}{m}, \quad (1.4.15)$$

իսկ տարածական խնդրի դեպքում կլինի՝

$$x_c = \frac{M_{yz}}{m}; \quad y_c = \frac{M_{xz}}{m}; \quad z_c = \frac{M_{xy}}{m}: \quad (1.4.16)$$

Խնդիր 4.1. Հաշվել a կողմ ունեցող քառակուսի թիթեղի զանգվածը, ստատիկ և իներցիայի մոմենտները, ծանրության կենտրոնը, եթե հայտնի է, որ յուրաքանչյուր կետում զանգվածի $\rho(x; y)$ խտությունը համեմատական է այդ կետի քառակուսու գագաթներից մեկից ունեցած հեռավորության քառակուսուն, ընդ որում՝ քառակուսու կենտրոնում խտությունը հավասար է 1-ի (Նկ. 4.2):



Նկ. 4.2

Լուծում

Կորորդինատների սկզբնակետը ընտրենք հենց այն գագաթում, որից ունեցած հեռավորության քառակուսուն համեմատական է խտությունը, և առանցքներն ուղղենք քառակուսու կողմերով:

Այդ դեպքում՝

$$\rho(x; y) = k \cdot (x^2 + y^2),$$

որտեղ k -ն համեմատականության գործակիցն է և կորոշվի Նկ. 4.2 հետևյալ պայմանով՝

$$1 = \rho\left(\frac{a}{2}; \frac{a}{2}\right) = k \cdot \left(\frac{a^2}{4} + \frac{a^2}{4}\right) = k \cdot \frac{a^2}{2}; \Rightarrow$$

$$\Rightarrow k = \frac{2}{a^2}: \text{ Հետևաբար } \rho(x; y) = \frac{2(x^2 + y^2)}{a^2}.$$

Համաձայն 4.8-4.10 բանաձևերի՝ կունենանք զանգվածի համար՝

$$m = \iint_{(S)} \rho(x; y) dx dy = \frac{2}{a^2} \int_0^a \left[\int_0^a (x^2 + y^2) dy \right] dx = \frac{4a^2}{3}, \quad (1.4.17)$$

ստատիկ մոմենտների համար՝

$$\begin{cases} M_x = \iint_{(S)} \rho(x; y) y dx dy = \frac{2}{a^2} \int_0^a \left[\int_0^a (x^2 + y^2) y dy \right] dx = \frac{5a^3}{6}, \\ M_y = \iint_{(S)} \rho(x; y) x dx dy = \frac{2}{a^2} \int_0^a \left[\int_0^a (x^2 + y^2) x dy \right] dx = \frac{5a^3}{6}, \end{cases} \quad (1.4.18)$$

ինտեգրիչի սումմաների համար՝

$$\begin{aligned} I_x &= \iint_{(S)} \rho(x; y) y^2 dx dy = \frac{2}{a^2} \int_0^a \left[\int_0^a (x^2 + y^2) y^2 dy \right] dx = \frac{28a^4}{45}, \\ I_y &= \iint_{(S)} \rho(x; y) x^2 dx dy = \\ &= \frac{2}{a^2} \int_0^a \left[\int_0^a (x^2 + y^2) x^2 dy \right] dx = \frac{28a^4}{45}, \end{aligned} \quad (1.4.19)$$

$$I_0 = I_x + I_y = \iint_{(S)} \rho(x; y) (x^2 + y^2) dx dy = \frac{56a^4}{45}.$$

Ծանրության կենտրոնի կոորդինատները կորոշենք (1.4.15)-ից, այսինքն՝


$$x_c = \frac{M_y}{m} = \frac{\frac{5a^3}{6}}{\frac{4a^2}{3}} = \frac{5a}{8}; \quad y_c = \frac{M_x}{m} = \frac{\frac{5a^3}{6}}{\frac{4a^2}{3}} = \frac{5a}{8}.$$

Խնդիր 4.2. Գտնել $x^2 + y^2 + z^2 \leq 2az$ գնդի ծանրության կենտրոնը, եթե ծավալային խտությունը $\rho(x; y; z) = (x^2 + y^2 + z^2)^{-\frac{1}{2}}$:

Լուծում

Նախ գտնենք գնդի զանգվածը՝

$$\begin{aligned} m &= \iiint_{(V)} \rho(x; y; z) dx dy dz = \\ &= \iiint_{x^2 + y^2 + z^2 \leq 2az} (x^2 + y^2 + z^2)^{-\frac{1}{2}} dx dy dz \end{aligned}$$



Նկ. 4.3

Համաձայն 4.4 բանաձևի, կունենանք՝

$$m = \int_0^{2a} \left[\iint_{P_z} (x^2 + y^2 + z^2)^{-\frac{1}{2}} dx dy \right] dz, \quad (14.20)$$

որտեղ P_z -ը $\sqrt{2az - z^2}$ շրջանն է: (1.4.20) ինտեգրալը հաշվելու համար անցնեք բևեռային կոորդինատների՝

$$\begin{cases} x = r \cos \varphi; \\ y = r \sin \varphi; \end{cases} \quad (0 \leq r \leq \sqrt{2az - z^2}; \varphi \in [0; 2\pi]):$$

Հաշվի առնելով, որ Յակոբյանը $|J(r; \varphi)| = r$, ըստ 4.7 բանաձևի, կստանանք՝

$$\begin{aligned} Int(z) &= \int_0^{2\pi} \int_0^{\sqrt{2az - z^2}} \frac{r dr d\varphi}{\sqrt{r^2 + z^2}} = 2\pi \int_0^{\sqrt{2az - z^2}} \frac{r dr d\varphi}{\sqrt{r^2 + z^2}} \\ &= 2\pi(\sqrt{2az} - z): \end{aligned}$$

Այդ դեպքում, նկատի ունենալով $Int(z)$ ինտեգրալը, (1.4.20)-ից կունենանք՝

$$m = \int_0^{2\pi} Int(z) dz = 2\pi \int_0^{2\pi} (\sqrt{2az} - z) dz = \frac{4\pi}{3} a^2:$$

Համանման դատողություններով կստացվի՝

$$M_{xy} = \iiint_{(V)} \frac{z dx dy dz}{\sqrt{x^2 + y^2 + z^2}} = \frac{16\pi}{15} a^2,$$

$$M_{yz} = \iiint_{(V)} \frac{x dx dy dz}{\sqrt{x^2 + y^2 + z^2}} = 0; M_{xz} = \iiint_{(V)} \frac{y dx dy dz}{\sqrt{x^2 + y^2 + z^2}} = 0:$$

Հետևաբար համաձայն 4.16-ի՝ կունենանք՝

$$x_c = \frac{M_{yz}}{m} = 0; y_c = \frac{M_{xz}}{m} = 0; z_c = \frac{M_{xy}}{m} = \frac{4a}{5}:$$

Խնդիր 4.3. Դիցուք $\rho(x; y; z)$ ծավալային խտությամբ տարածական տիրույթով (մարմնով) բաշխված է որոշակի զանգված, և այդ մարմնից դուրս գտնվող A կետում տեղավորված է միավոր զանգված: Որոշել այն ուժը, որով նյութական (V) տիրույթը ձգում է A նյութական կետը:

Լուծում

Եթե $A(\xi; \eta; \zeta)$ կետը ձգվեր միայն $M(x; y; z)$ կետում կենտրոնացված m զանգվածի կողմից, ապա ձգողական ուժի մեծությունը կլիներ՝

$$F = \frac{m}{r^2},$$

որտեղ $r = |AM|$: Քանի որ $\vec{F}$ ձգողական ուժը ուղղված է $\overrightarrow{AM}$ վեկտորով, նրա ուղղորդ կոորդինատները կլինեն՝

$$\frac{x - \xi}{r}; \frac{y - \eta}{r}; \frac{z - \zeta}{r}:$$

Հետևաբար $\vec{F}$ ձգողական ուժի պրոյեկցիաները առանցքների վրա կորոշվեն հետևյալ բանաձևերով՝

$$F_x = m \frac{x - \xi}{r^3}; F_y = m \frac{y - \eta}{r^3}; F_z = m \frac{z - \zeta}{r^3}: \quad (1.4.21)$$

Պատկերացնենք, որ (V) մարմինը տրոհված է մանր (V_k) մասերի, և յուրաքանչյուր մասի զանգվածը կենտրոնացված է

որևէ $M_k(x_k; y_k; z_k) \in (V_k)$ կետում: Այդ ժամանակ $\vec{F}$ ուժի $F_x; F_y; F_z$ պրոյեկցիաները համապատասխանաբար քիչ կտարբերվեն ներքոգրյալ գումարներից՝

$$\sum_{k=1}^n \frac{\rho(M_k)|V_k|}{r_k^3} (x_k - \xi); \sum_{k=1}^n \frac{\rho(M_k)|V_k|}{r_k^3} (y_k - \eta);$$

$$\sum_{k=1}^n \frac{\rho(M_k)|V_k|}{r_k^3} (z_k - \zeta),$$

որտեղ $r_k = |AM_k|$ և $|V_k|$ -ն (V) մարմնի տրոհված (V_k) մասի ծավալն է, որոնց ճշգրիտ արժեքները կստացվեն, երբ (V_k) մասերի առավելագույն տրամագիծը ձգտեցնենք 0-ի՝

$$\begin{cases} F_x = \iiint_{(V)} \rho(x; y; z) \frac{x - \xi}{r^3} dx dy dz, \\ F_y = \iiint_{(V)} \rho(x; y; z) \frac{y - \eta}{r^3} dx dy dz, \\ F_z = \iiint_{(V)} \rho(x; y; z) \frac{z - \zeta}{r^3} dx dy dz: \end{cases} \quad (1.4.22)$$

Դիտարկենք հետևյալ **խնդիրը**: Հաշվել R շառավղով համասեռ ($\rho = 1$) գնդի ձգողական ուժը գնդի կենտրոնից a ($a > R$) հեռավորության վրա գտնվող միավոր զանգվածով A կետում:

Լուծում

Ուղղանկյուն կոորդինատական համակարգի սկզբնակետը համարենք գնդի կենտրոնը և oz առանցքն ուղղենք $\overrightarrow{OA}$ վեկտորով:

Հաշվի առնելով սիմետրիկությունը՝ $\vec{F}(A)$ ուժի F_x և F_y պրոյեկցիաների համար կունենանք՝

$$F_x(A) = F_y(A) = 0; F_z(0; 0; z) =$$

$$= \iiint_{(V)} (z - a) \frac{dx dy dz}{[x^2 + y^2 + (z - a)^2]^{3/2}}: \quad (1.4.23)$$

Վերոգրյալ ինտեգրալը հաշվելու համար անցնենք սֆերիկ կոորդինատների՝

$$\begin{cases} x = r \sin \varphi \cos \theta; \\ y = r \sin \varphi \sin \theta; \varphi \in [0; \pi], \theta \in [0; 2\pi], r \in [0; R]; \\ z = r \cos \varphi; \end{cases}$$

Համաձայն 4.5 բանաձևի, քանի որ ըստ (1.4.6)-ի՝ Յակոբյանը հավասար է $r^2 \sin \varphi$, նկատի ունենալով (1.4.22)-ը՝ կունենանք՝

$$F_z = 2\pi \int_0^R \left[r^2 \int_0^\pi \frac{(r \cos \varphi - a) \sin \varphi}{(r^2 + a^2 - 2ar \cos \varphi)^{3/2}} d\varphi \right] dr : (1.4.24)$$

Կատարելով (1.4.24)-ում $r^2 + a^2 - 2ar \cos \varphi = t$ տեղադրումն ու նկատի ունենալով, որ $a > r$, կստանանք՝

$$\begin{aligned} r^2 + a^2 - 2ar \cos \varphi = t; \quad r \cos \varphi = \frac{r^2 + a^2 - t}{2a}; \quad \sin \varphi d\varphi = \frac{dt}{2ar}, \\ t = r^2 + a^2 - 2ar \cos \varphi = \begin{cases} r^2 + a^2 + 2ar = (r + a)^2, \text{ երբ } \varphi = \pi \\ r^2 + a^2 - 2ar = (r - a)^2, \text{ երբ } \varphi = 0 \end{cases} \end{aligned}$$

այսինքն՝

$$\begin{aligned} F_z &= \frac{2\pi}{a^2} \int_0^R \left[r \int_{(r-a)^2}^{(r+a)^2} \left(\frac{r^2 - a^2}{t^{\frac{3}{2}}} - t^{\frac{1}{2}} \right) dt \right] dr = \\ &= -\frac{2\pi}{a^2} \int_0^R \left[\frac{(r^2 - a^2)}{t^{\frac{1}{2}}} + t^{\frac{1}{2}} \right]_{(r-a)^2}^{(r+a)^2} r dr = \\ &= -\frac{4\pi}{a^2} \int_0^R \left(\frac{r^2 - a^2 + (r + a)^2}{(r + a)} + \frac{r^2 - a^2 + (r - a)^2}{|r - a|} \right) r dr = \\ &= -\frac{4\pi}{a^2} \int_0^R r^2 dr = -\frac{4\pi R^3}{3} \frac{1}{a^2}. \end{aligned}$$

Այստեղից կունենանք՝

$$F_z = -\frac{4\pi R^3}{3} \frac{1}{a^2}: \quad (1.4.25)$$

Հաշվի առնելով, որ $\frac{4\pi R^3}{3}$ -ը համասեռ գնդի ծավալն է, (1.4.25)-ից հետևում է, որ գնդից դուրս գտնվող A միավոր զանգվածով նյութական կետը այդ գնդի կողմից ձգվում է այն ուժով, ինչ ուժով կձգվեր գնդի կենտրոնում կենտրոնացված ամբողջ $\frac{4\pi R^3}{3}$ զանգվածի կողմից:

§1.5. Մակերևութային ինտեգրալների սահմանումն ու կիրառությունները

1.5.1. Դիցուք տրված է (Q) մակերևույթ, որը կարող է լինել փակ կամ բաց, ողորկ կամ մաս առ մաս ողորկ, որի վրա որոշված է միարժեք $f(x; y; z) = f(M)$ ֆունկցիան:

Դիտարկվող (Q) մակերևույթը կամայական եղանակով մաս առ մաս ողորկ կորերի օգնությամբ տրոհենք մանր մասերի՝

$$(Q) = \sum_{k=1}^n (\Delta q_k):$$

Յուրաքանչյուր (Δq_k) մասում վերցնենք մի $M_k(x_k; y_k; z_k)$ ցանկացած կետ, այդ կետում հաշվենք $f(x_k; y_k; z_k)$ ֆունկցիայի արժեքները, դրանք բազմապատկենք մակերևույթի համապատասխան (Δq_k) մակերեսով և ստացված արտադրյալները գումարենք: Այդ դեպքում կստանանք մի նոր տեսակի ինտեգրալային գումար՝

$$\sum_{k=1}^n f(M_k) |\Delta q_k| = \sum_{k=1}^n f(x_k; y_k; z_k) |\Delta q_k|: \quad (1.5.1)$$

Սահմանում 13. Եթե գոյություն ունենա (1.5.1) ինտեգրալային գումարների սահմանը, երբ (Δq_k) -ների տրամագծերից մեծագույնը ձգտում է զրոյի՝ անկախ (Q) մակերևույթը տրոհելու և այդ $M(x; y; z)$ կետերը ընտրելու եղանակից, ապա այդ

սահմանը կոչվում է $f(x; y; z)$ -ի առաջին տիպի մակերևութային ինտեգրալ՝ տարածված (Q) -ով, նշանակվում է այսպես՝

$$\iint_{(Q)} f(x; y; z) dq = \iint_{(Q)} f(M) dq: \quad (1.5.2)$$

1.5.2. Դիցուք (Q) երկկողմ ողորկ կողմնորոշված մակերևութի վրա որոշված է $f(x; y; z)$ ֆունկցիան: Դիտարկվող (Q) -ն առանցքին զուգահեռ ուղիղների հետ հատվել կարող է միայն մեկ կետում: Տրոհենք (Q) -ը ողորկ կորերով մանր մասերի, կազմենք հետևյալ ներքոգրյալ ինտեգրալային գումարը՝

$$(Q) = \bigcup_{k=1}^n (\Delta q_k), \quad (1.5.3)$$

սակայն այս անգամ բազմապատկենք ոչ թե (Δq_k) մակերևութի մակերեսով, այլ xoy հարթության վրա (Δq_k) -ի պրոյեկցիայի $(\Delta q_k)_{xy}$ մակերեսով՝ վերջինս վերցնելով իր նշանով՝ (Q) մակերևութի կողմնորոշմանը համապատասխան:

Սահմանում 14. Եթե վերոնշված ինտեգրալային գումարի սահմանը գոյություն ունենա, երբ (Δq_k) -երի տրամագծերից մեծագույնը ձգտում է զրոյի՝ անկախ տրված մակերևութը տրոհելու և $M_k(x_k; y_k; z_k)$ կետերն ընտրելու եղանակից, ապա այդ սահմանն անվանում են երկրորդ տիպի մակերևութային ինտեգրալ՝ ըստ x և y փոփոխականների, տարածված (Q) մակերևութի մեր ընտրած կողմով և տրվում է հետևյալ տեսքով՝

$$I_{xy} = \iint_{(Q)} f(M) dq_{xy} = \iint_{(Q)} f(x; y; z) dx dy: \quad (1.5.4)$$

Համանման եղանակով տրվում են

$$\begin{aligned} I_{yz} &= \iint_{(Q)} f(M) dq_{yz} = \iint_{(Q)} f(x; y; z) dy dz, \\ I_{xz} &= \iint_{(Q)} f(M) dq_{xz} = \iint_{(Q)} f(x; y; z) dx dz \end{aligned} \quad (1.5.5)$$

երկրորդ տիպի մակերևութային ինտեգրալների սահմանումները:

Կիրառություններում հաճախ հանդես են գալիս երեք տարբեր ֆունկցիաների 2-րդ տիպի մակերևութային ինտեգրալներ ըստ տարբեր փոփոխականների միմյանց հետ գումարած:

Առաջին ու երկրորդ տիպի մակերևութային ինտեգրալները կախված են հետևյալ կերպ՝

$$\begin{aligned} & \iint_{(Q)} P dydz + Q dx dz + R dx dy = \\ & = \iint_{(Q)} [P \cos \alpha + Q \cos \beta + R \cos \gamma] dq, \end{aligned} \quad (1.5.6)$$

որտեղ $\cos \alpha$ -ն, $\cos \beta$ -ն, $\cos \gamma$ -ն՝ մակերևույթի նորմալի ուղղորդ կոսինուսներն են, ընդ որում՝ նորմալը համապատասխանում է մակերևույթի ընտրված կողմին:

Մակերևութային ինտեգրալները հաշվվում են հետևյալ բանաձևերով:

Եթե

$$\begin{cases} x = x(u, v), \\ y = y(u, v), (u; v \in Q) \\ z = z(u, v) \end{cases}$$

անընդհատ մասնակի ածանցյալներ ունեցող ֆունկցիաները տրված (Q) մակերևույթի պարամետրական հավասարումներն են, ապա (Q) -ի վրա որոշված կամայական $f(x; y; z)$ ֆունկցիայի համար՝

$$\begin{aligned} & \iint_{(Q)} f(x; y; z) dq = \\ & = \iint_{(Q)} f(x(u, v); y(u, v); z(u, v)) \sqrt{EF - G} du dv, \end{aligned} \quad (1.5.7)$$

որտեղ՝


$$\begin{cases} E = (x'_u)^2 + (y'_u)^2 + (z'_u)^2, \\ F = (x'_v)^2 + (y'_v)^2 + (z'_v)^2, \\ G = x'_u x'_v + y'_u y'_v + z'_u z'_v. \end{cases}$$

Խնդիր 1.5.1. Դիտարկենք տարածության մեջ ունենք $\rho = 1$ ծավալային խտությամբ չսեղմվող հեղուկ, որի մասնիկի $\vec{V}$ արագությունն անկախ է ժամանակից, կախված է միայն մասնիկի դիրքից:

Գտնել (Q) ողորկ մակերևույթով միավոր ժամանակում հոսած հեղուկի քանակը:

Լուծում

Մասնիկի $\vec{V}$ արագության պրոյեկցիաներն առանցքների և (Q) -ի n նորմալի վրա նշանակենք $\vec{V}_x; \vec{V}_y; \vec{V}_z$: (Q) մակերևույթը ողորկ կորերով տրոհենք (q_k) մասերի, յուրաքանչյուր (q_k) մասով հոսած հեղուկի քանակությունը միավոր ժամանակում (q_k) $\vec{n}$ մոտավորապես հավասար է (Նկ. 5.1)



Նկ.5.1

$$V_n(M_k)|q_k| = (V_x \cos \alpha + V_x \cos \beta + V_x \cos \gamma)|q_k|,$$

որտեղ $|q_k|$ -ն q_k մասի մակերեսն է, M_k -ն որևէ կետ է q_k -ից, և $\cos \alpha$ -ն, $\cos \beta$ -ն, $\cos \gamma$ -ն մակերևույթի նորմալի ուղղորդ կոսինուսներն են այդ կետում:

Հետևաբար միավոր ժամանակում մակերևույթի բացասական կողմից դրական կողմը հասած հեղուկի քանակությունը հավասար է՝

$$\begin{aligned}\iint_{(Q)} V_n dq &= \iint_{(Q)} [V_x \cos \alpha + V_y \cos \beta + V_z \cos \gamma] dq = \\ &= \iint_{(Q)} V_x dydz + V_y dx dz + V_z dx dy: \quad (1.5.8)\end{aligned}$$

Վերագրյալ (1.5.8) ինտեգրալը հիդրոմեխանիկայում կոչվում է $\vec{V}$ -ի հոսք (Q) -ով:

Ենթադրենք, որ (Q) մակերևույթը փակ է, և $\vec{V}$ վեկտորի պրոյեկցիաները (Q) -ով սահմանափակված (D) տիրույթում ունեն անընդհատ մասնակի ածանցյալներ: Այդ դեպքում, համաձայն Օստրոգրադսկու բանաձևի, կունենաք

$$\begin{aligned}I &= \iint_{(Q)} V_n dq = \iiint_{(D)} \left[\frac{\partial V_x}{\partial x} + \frac{\partial V_y}{\partial y} + \frac{\partial V_z}{\partial z} \right] dx dy dz = \\ &= \iiint_{(D)} \operatorname{div} \vec{V} dx dy dz, \quad (1.5.9)\end{aligned}$$

որտեղ՝

$$\operatorname{div} \vec{V} = \frac{\partial V_x}{\partial x} + \frac{\partial V_y}{\partial y} + \frac{\partial V_z}{\partial z}$$

արտահայտությունը կոչվում է $\vec{V}$ վեկտորական դաշտի դիվերգենցիա:

Օգտագործելով եռակի ինտեգրալի միջին արժեքի թեորեմը՝ (1.5.9)-ից կգտնենք՝

$$\operatorname{div} \vec{V} = \lim_{(D) \rightarrow M} \frac{\iint_{(Q)} V_n dq}{|D|}, \quad (1.5.10)$$

որտեղ $|D|$ -ն տիրույթի ծավալն է, և $(D) \rightarrow M$ -ը նշանակում է՝ (D) տիրույթը կծկվում է M կետի շուրջը: (1.5.10)-ից հետևում է, որ $\operatorname{div} \vec{V}$ -ն ցույց է տալիս աղբյուրների խտությունը:

Եթե աղբյուրներ չկան $\vec{V}$ վեկտորական դաշտում, ապա $\operatorname{div} \vec{V} = 0$ այդպիսի դաշտը կոչվում է խողովակակերպ (սուլենոիդալ): (1.5.8) բանաձևից հետևում է, որ սուլենոիդալ դաշտում յուրաքանչյուր փակ մակերևույթով արտահոսում է այնքան հեղուկ, որքան ներհոսում է:

Խնդիր 1.5.2. Դիտարկենք $\rho(x; y; z)$ մակերևութային խտությամբ (Q) մակերևույթով անընդմեջ բաշխված որոշակի զանգված և այդ մակերևույթից դուրս գտնվող միավոր զանգվածով A նյութական կետ: Որոշել այն ուժը, որով նյութական մակերևույթը կամ պարզ շերտը ձգում է A նյութական կետը:

Լուծում

Եթե $A(\xi; \eta; \zeta)$ կետը ձգվեր միայն $M(x; y; z)$ կետում կենտրոնացված m զանգվածի կողմից, ապա ձգողական ուժը կլիներ՝


$$Q A(\xi; \eta; \zeta) \vec{F} = \frac{m}{r^2} \cdot \frac{\overrightarrow{AM}}{r},$$

M որտեղ

$$r = |AM| = \sqrt{(x - \xi)^2 + (y - \eta)^2 + (z - \zeta)^2}:$$

Հաշվի առնելով, որ $\overrightarrow{AM}$ վեկտորի ուղղորդ կոսինուսներ են՝

$$\frac{x - \xi}{r}; \frac{y - \eta}{r}; \frac{z - \zeta}{r},$$



Նկ. 5.2

ապա այդ դեպքում ուժի պրոյեկցիաների համար կունենանք՝

$$F_x = m \frac{x - \xi}{r^3}; F_y = m \frac{y - \eta}{r^3}; F_z = m \frac{z - \zeta}{r^3}; \quad (1.5.11)$$

Պատկերացնենք, որ (Q) մակերևույթը տրոհված է մանր մասերի, այդ մասերի $\forall m_k$ զանգված կենտրոնացված է որևէ $M_k(x_k; y_k; z_k) \in (q_k)$: Այդ դեպքում $\vec{F}$ համագոր ուժի F_x, F_y, F_z պրոյեկցիաները համապատասխանաբար քիչ կտարբերվեն հետևյալ գումարներից

$$\sum_{k=1}^n \frac{\rho(M_k)|q_k|}{r_k^3} (x_k - \xi); \sum_{k=1}^n \frac{\rho(M_k)|q_k|}{r_k^3} (y_k - \eta);$$

$$\sum_{k=1}^n \frac{\rho(M_k)|q_k|}{r_k^3} (z_k - \zeta);$$

որտեղ $r_k = |AM_k|$ և $|q_k|$ -ն (q_k) -ի մակերեսն է, և այդ ձգողական ուժի պրոյեկցիաների ճշգրիտ արժեքները կստանանք, երբ (q_k) մասերի առավելագույն տրամագիծը $\lambda \rightarrow 0$,

$$\left\{ \begin{aligned} F_x(A) &= \lim_{\lambda \rightarrow 0} \sum_{k=1}^n \frac{\rho(M_k)|q_k|}{r_k^3} (x_k - \xi) = \iint_{(q)} \rho(x; y; z) \frac{x - \xi}{r^3} dq; \\ F_y(A) &= \lim_{\lambda \rightarrow 0} \sum_{k=1}^n \frac{\rho(M_k)|q_k|}{r_k^3} (y_k - \xi) = \iint_{(q)} \rho(x; y; z) \frac{y - \eta}{r^3} dq; \\ F_z(A) &= \lim_{\lambda \rightarrow 0} \sum_{k=1}^n \frac{\rho(M_k)|q_k|}{r_k^3} (z_k - \xi) = \iint_{(q)} \rho(x; y; z) \frac{z - \zeta}{r^3} dq; \end{aligned} \right. \quad (1.5.12)$$

Համաձայն 2-րդ տիպի մակերևութային ինտեգրման (1.5.6) բանաձևի պարամետրից կախված ինտեգրալի նշանի տակ դիֆերենցման կանոնի՝ կունենանք՝

$$\begin{cases} \frac{\partial}{\partial \xi} \left[\iint_{(q)} \frac{\rho(x; y; z)}{r} dq \right] = \iint_{(q)} \rho(x; y; z) \frac{x - \xi}{r^3} dq = F_x(\xi; \eta; \zeta), \\ \frac{\partial}{\partial \eta} \left[\iint_{(q)} \frac{\rho(x; y; z)}{r} dq \right] = \iint_{(q)} \rho(x; y; z) \frac{y - \eta}{r^3} dq = F_y(\xi; \eta; \zeta), \\ \frac{\partial}{\partial \zeta} \left[\iint_{(q)} \frac{\rho(x; y; z)}{r} dq \right] = \iint_{(q)} \rho(x; y; z) \frac{z - \zeta}{r^3} dq = F_z(\xi; \eta; \zeta), \end{cases} \quad (1.5.13)$$

որտեղ $r = \sqrt{(x - \xi)^2 + (y - \eta)^2 + (z - \zeta)^2}$, նյութական A կետը չի պատկանում (q) -ին և (1.5.13) պայմանները բավարարող

$$W = \iint_{(q)} \frac{\rho(x; y; z)}{r} dq \quad (1.5.14)$$

ֆունկցիան կոչվում է (Q) պարզ շերտի պոտենցիալ:

Դիտարկենք հետևյալ մասնավոր դեպքերը:


Խնդիր 1.5.3. Տրված է հիմքի R շառավիղով և h բարձրությամբ ուղիղ շրջանային զլան, որի կողմնային մակերևույթով $\rho(x; y; z) = 1$ խտությամբ բաշխված է որոշակի զանգված: Գտնել՝

ա) զլանային մակերևույթի ձգողական ուժը հիմքի կենտրոնում տեղադրված միավոր զանգվածի նկատմամբ,

բ) նույն կետում պոտենցիալը:

Լուծում

Եթե զլանի հիմքի կենտրոնը համարենք ուղղանկյուն կոորդինատական համակարգի $o(0; 0; 0)$ սկզբնակետ և oz առանցքը ուղղենք զլանի առանցքով:



Նկ. 5.3

Նախ նկատենք, որ ձգողական ուժի F_x և F_y պրոյեկցիաները սիմետրիկության պատճառով հավասար են զրոյի:

Գլանի կողմնային մակերևույթը ներկայացնենք պարամետրական տեսքով՝

$$\begin{cases} x = R \cos \theta, \\ y = R \sin \theta, \quad (\theta \in [0; 2\pi], z \in [0; h]), \\ z = z, \end{cases}$$


նկատի ունենալով (1.5.6) ու (1.5.12) բանաձևերը՝ կստանանք՝

$$\left\{ \begin{aligned} F_z(0; 0; 0) &= \int_0^{2\pi} \int_0^h \frac{z}{(R^2 + z^2)^{\frac{3}{2}}} R dz d\theta = \\ &= 2\pi R \int_0^h \frac{dz}{(R^2 + z^2)^{\frac{3}{2}}} = \frac{2\pi(\sqrt{R^2 + z^2} - R)}{\sqrt{R^2 + z^2}}, \quad (1.5.15) \\ W(0; 0; 0) &= \int_0^{2\pi} \int_0^h \frac{R dz d\theta}{\sqrt{R^2 + z^2}} = 2\pi R \ln \frac{h + \sqrt{R^2 + h^2}}{R}: \end{aligned} \right.$$

Խնդիր 1.5.4. Գտնել R շառավիղով համասեռ գնդային մակերևույթի ձգողական ուժը և պոտենցյալը կենտրոնից a հեռավորության վրա գտնվող միավոր զանգվածով A նյութական կետում:

Լուծում

Դիցուք կոորդինատների սկզբնակետը $O(0; 0; 0)$ (Նկ. 5.4) գտնվում է գնդի կենտրոնում և միավոր զանգվածով A կետը Oz կոորդինատական առանցքի դրական դրական ուղղության վրա:



Նկ.5.4

Նախ նկատենք, որ F ձգողական ուժի F_x և F_y պրոյեկցիաները սիմետրիկության պատճառով հավասար են զրոյի: Գնդային մակերևույթը ներկայացնենք պարամետրական տեսքով՝

$$\begin{aligned} x &= R \sin \varphi \cos \theta; \quad y = R \sin \varphi \sin \theta; \quad z = R \cos \theta: \\ \theta &(0 \leq \varphi \leq \pi; 0 \leq \theta \leq 2\pi) \end{aligned}$$

Ըստ 1.5.6 ու 1.5.7-ի՝ երի, կունենանք

$$x F_z(0; 0; 0) = 2\pi R^2 \int_0^{\pi} \frac{(R \cos \varphi - a) d\varphi}{(R^2 + a^2 - 2aR \cos \varphi)^{3/2}};$$

Վերջին ինտեգրալում կատարելով տեղադրում՝

$$t^2 = R^2 + a^2 - 2aR \cos \varphi,$$

կստանանք՝

$$F_z(0; 0; 0) = \frac{\pi R^2}{a^2} \left(2R - \frac{R^2 - a^2}{|R - a|} - |R - a| \right) =$$

$$= \begin{cases} 0, \text{ երբ } a < R; \\ -\frac{4\pi R^2}{a^2}, \text{ երբ } a > R: \end{cases} \quad (1.5.16)$$

Ստացանք, որ.

ա) եթե A նյութական կետը գտնվում է գնդի ներսում, ապա այն չի ձգվում սֆերայի կողմից՝ $F_x = F_y = F_z = 0$,

բ) եթե A նյութական կետը գտնվում է գնդից դուրս, ապա այն ձգվում է սֆերայի կողմից նույն ուժով, ինչ ուժով կձգվեր կենտրոնում կենտրոնացված նույն $m = 2\pi R^2$ զանգվածով նյութական կետի կողմից:

Եթե A նյութական կետը գտնվում է սֆերայի վրա ($a = R$), այդ ժամանակ (1.5.15) ինտեգրալը կվերածվի անիսկական ինտեգրալի, որի զուգամիտությունը դժվար չէ հիմնավորել: Որոշ պարզեցումներից հետո այն կրեքվի հետևյալ ինտեգրալին՝

$$\frac{\pi}{\sqrt{2}} \int_0^\pi \frac{\sin \varphi d\varphi}{\sqrt{1 - \cos \varphi}} = -2\pi:$$

Երբ $a = R$, ստանում ենք՝

$$F_z(0; 0; 0) = \frac{1}{2} \left[\lim_{a \rightarrow R^+} F_z(0; 0; 0) + \lim_{a \rightarrow R^-} F_z(0; 0; 0) \right]:$$

Գտնենք պոտենցյալը: Համաձայն (1.5.6) ու (1.5.7) բանաձևերի՝ կստանանք՝

$$W(0; 0; a) = \iint_{(q)} \frac{dq}{r} = 2\pi R^2 \int_0^\pi \frac{\sin \varphi d\varphi}{\sqrt{R^2 + a^2 - 2aR \cos \varphi}} =$$

$$= \begin{cases} 4\pi R^2; \text{ երբ } a < R; \\ \frac{4\pi R^2}{a^2}; \text{ երբ } a > R: \end{cases} \quad (1.5.17)$$

Երբ $a = R$, կստանանք զուգամետ անիսկական ինտեգրալ, որի արժեքը $= 4\pi R$ -ի:

§ 1.6. Ֆիզիկական մարմինների երկարության, մակերեսի և ծավալի հաշվումը որոշյալ ինտեգրալով

1.6.1. Հարթ պատկերի մակերեսի հաշվումը

Հաշվել տրված կորագիծ սեղանի մակերեսը, որը սահմանափակված է $f(x)$ -ի գրաֆիկով ($f(x) \geq 0$) $x = a, x = b$ ուղիղներով, $[a, b]$ հատվածով որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$S = \int_a^b y \, dx = \int_a^b f(x) \, dx:$$

Դիցուք հատվածի վրա տրված են $y = f_1(x), y = f_2(x)$ անընդհատ ֆունկցիաները այնպես, որ $f_2(x) \geq f_1(x)$: Այդ դեպքում այդ ֆունկցիաների միջև սահմանափակված պատկերի մակերեսը $[a, b]$ հատվածի վրա որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$S = \int_a^b [f_2(x) - f_1(x)] \, dx:$$

Օրինակ 1. Որոշել $y = -x^2 + 3, y = 2x, x = 0$ զծերով սահմանափակված պատկերի մակերեսը:

Լուծում

Նախ գտնենք գրաֆիկների հատման կետերի կոորդինատները՝

$$\begin{aligned} \begin{cases} y = 2x, (x \geq 0), \\ y = -x^2 + 3, \end{cases} &\Rightarrow (-x^2 + 3 = 2x), \Rightarrow \\ &\Rightarrow (x^2 + x - 3 = 0), \text{ այստեղից } \begin{cases} x = 1 \\ y = 2 \end{cases} \end{aligned}$$

$$\begin{aligned} S &= \int_0^2 (2x + x^2 - 3) \, dx = \left(x^2 + \frac{x^3}{3} - 3x \right) \Big|_0^2 = 4 + \frac{8}{3} - 3 \cdot 2 = \\ &= \frac{12 + 8 - 18}{3} = \frac{2}{3}. \end{aligned}$$

Օրինակ 2. Որոշել $y = \sin 2x, y = 0.5, x = 45^\circ$ գծերով սահմանափակված պատկերի մակերեսը:

Լուծում

Նախ գտնենք գրաֆիկների հատման կետերի կոորդինատները

$$\begin{cases} y = \sin 2x \\ y = 0.5, (x = 45^\circ) \end{cases} \rightarrow \left(\sin 2x = \frac{1}{2} \right), \rightarrow (x = 60^\circ),$$

$$S = \int_{45^\circ}^{60^\circ} \left(\frac{1}{2} - \sin 2x \right) dx = \left(\frac{x}{2} + \frac{\cos 2x}{2} \right)_{45^\circ}^{60^\circ} = 0.38:$$

Օրինակ 3. Որոշել $y = 2^x, y = 2^{-x}, x = 0$ գծերով սահմանափակված պատկերի մակերեսը:


Օրինակ 4. Որոշել $y = \ln(x + 1), y = 2 \ln x, x = 1$ գծերով սահմանափակված պատկերի մակերեսը:

Օրինակ 5. Որոշել $y = \sin 2x, y = \cos^2 x, x = 0$ գծերով սահմանափակված պատկերի մակերեսը:

1.6.2. Կորի աղեղի երկարության հաշվումը

Ենթադրենք xOy հարթության մեջ AB կորը տրված է $y = f(x)$ հավասարման ($x \in [ab]$) օգնությամբ: Պահանջվում է գտնել այդ AB կորի L երկարությունը: AB կորը կամայական ձևով $A = M_0; M_1; M_2; \dots; M_{n-1}; M_n = B$ կետերով բաժանենք n մասերի, կստանանք AB բեկյալը:

Բեկյալի $[M_{i-1}; M_i]$ հատվածի երկարությունը նշանակենք $l_i(i, \mu) = \min_{j \in \{0, 1, \dots, n\}} |l_i|$:



Նկ. 6.1

Հաշվենք AB բեկյալի երկարությունը որպես l_i հատվածների երկարությունների գումար՝

$$P = \sum_{i=1}^n l_i:$$

Սահմանում. AB կորի L երկարություն կանվանենք P պարագծի սահմանը, երբ $\mu \rightarrow 0$:

$$\text{Այսինքն՝ } L = \lim_{\mu \rightarrow 0} P(\mu) = \lim_{\mu \rightarrow 0} \sum_{i=1}^n l_i:$$

Թեորեմ. Եթե $f(x)$ և $f'(x)$ ֆունկցիաները անընդհատ են $[a, b]$ հատվածի վրա, ապա $L = \int_a^b \sqrt{1 + [f'(x)]^2} dx$

Ապացույց. AB բեկյալի $A = M_0; M_1; M_2; \dots; M_{n-1}; M_n = B$ կետերի աբսցիսներով $[a, b]$ հատվածը $a = x_0 < x_1 < x_2 < \dots < x_{i-1} < x_i < \dots < x_n = b$ կետերով բաժանվում է n մասերի: Համապատասխանաբար կորի կետերի կոորդինատներն են $M_0 = A(a, f(a)),$

$$M_1(x_1; f(x_1)); M_2(x_2; f(x_2)); \dots; M_i(x_i; f(x_i)); \dots;$$

$$M_n(x_n; f(x_n)) = B(b; f(b)),$$

$$l_i = M_{i-1}M_i = \sqrt{(x_i - x_{i-1})^2 + [f(x_i) - f(x_{i-1})]^2}$$

$f(x)$ և $f'(x)$ ֆունկցիաները անընդհատ են $[a, b]$

հատվածի վրա, և հետևաբար $\forall [x_{i-1}; x_i]$ հատվածի համար ըստ Լանգրաժի թեորեմի $\exists c_i \in [x_{i-1}; x_i]$, որ

$$f(x_i) - f(x_{i-1}) = f'(c_i)(x_i - x_{i-1}),$$

$$l_i = \sqrt{(x_i - x_{i-1})^2 + [f(x_i) - f(x_{i-1})]^2} \\ = \sqrt{(x_i - x_{i-1})^2 + [f'(c_i)(x_i - x_{i-1})]^2} =$$

$$= \sqrt{1 + [f'(c_i)]^2}(x_i - x_{i-1}) = \sqrt{1 + [f'(c_i)]^2} \Delta x_i,$$

$$P = \sum_{i=1}^n \sqrt{1 + [f'(c_i)]^2} \Delta x_i:$$

Ստացանք ինտեգրալային գումարները: Քանի որ $f(x)$ և $f'(x)$ անընդհատ են $[a, b]$ հատվածի վրա, ապա անընդհատ է նաև

$\sqrt{1 + [f'(x)]^2}$ ֆունկցիան: Ըստ որոշյալ ինտեգրալի սահմանման՝

$$\lim_{\mu \rightarrow 0} P = \lim_{\mu \rightarrow 0} \sum_{i=1}^n \sqrt{1 + [f'(c_i)]^2} \Delta x_i = \int_a^b \sqrt{1 + [f'(x)]^2} dx = L:$$

Ենթադրենք կորը տրված է $x = \varphi(t)$; $y = \psi(t)$ պարամետրական հավասարումներով, ընդ որում՝

$$a = \varphi(\alpha); b = \psi(\beta); (\alpha \leq t \leq \beta): dx = \varphi'(t)dt;$$

$$dy = \psi'(t)dt; f'(x) = \frac{dy}{dx} = \frac{df}{dx} = \frac{\psi'(t)}{\varphi'(t)}:$$

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կստանանք՝

$$\begin{aligned} L &= \int_a^b \sqrt{1 + [f'(x)]^2} dx = \int_{\alpha}^{\beta} \sqrt{1 + \left[\frac{\psi'(t)}{\varphi'(t)} \right]^2} \cdot \varphi'(t) dt = \\ &= \int_{\alpha}^{\beta} \sqrt{[\varphi'(t)]^2 + [\psi'(t)]^2} dt: \end{aligned}$$

Ենթադրենք՝ կորը տրված է $\rho = \rho(\varphi)$ բևեռային կոորդինատներով $\alpha \leq \varphi \leq \beta$:

$$\begin{cases} x(\varphi) = \rho \cos \varphi, \\ y(\varphi) = \rho \sin \varphi, \end{cases} \begin{cases} x'(\varphi) = \rho'(\varphi) \cos \varphi - \rho(\varphi) \sin \varphi, \\ y'(\varphi) = \rho'(\varphi) \sin \varphi + \rho(\varphi) \cos \varphi. \end{cases}$$

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կստանանք՝

$$\begin{aligned} [x'(\varphi)]^2 + [y'(\varphi)]^2 &= [\rho'(\varphi) \cos \varphi - \rho(\varphi) \sin \varphi]^2 + \\ &+ [\rho'(\varphi) \sin \varphi + \rho(\varphi) \cos \varphi]^2 = \\ &= [\rho'(\varphi)]^2 (\sin^2 \varphi + \cos^2 \varphi) - 2\rho'(\varphi)\rho(\varphi) \cos \varphi \sin \varphi + \\ &+ \rho^2(\varphi) (\sin^2 \varphi + \cos^2 \varphi) + \\ &+ 2\rho'(\varphi)\rho(\varphi) \cos \varphi \sin \varphi = [\rho'(\varphi)]^2 + \rho^2(\varphi). \end{aligned}$$

$$L = \int_{\alpha}^{\beta} \sqrt{[\rho'(\varphi)]^2 + \rho^2(\varphi)} d\varphi:$$

Օրինակ 1. Գտնել պարաբոլի $y = 3 - 0.5x^2$ վերին կոր-
աղեղի երկարությունը $x \in [0; 5]$ հատվածի վրա:

Նախ հաշվենք տվյալ ֆունկցիայի ածանցյալը՝ $y'(x) = -x$;
Այդ դեպքում որոշվելիք կորի երկարությունը կլինի՝

$$\begin{aligned} L &= \int_0^5 \sqrt{1 + [y'(x)]^2} dx = \int_0^5 \sqrt{1 + x^2} dx = x\sqrt{1 + x^2} \Big|_{x=0}^{x=5} - \\ &- \int_0^5 \frac{x dx}{\sqrt{1 + x^2}} = 5\sqrt{26} - \int_0^{25} \frac{dt}{2\sqrt{1+t}} = 5\sqrt{26} - \sqrt{1+t} \Big|_0^{25} = \\ &= 4\sqrt{26} + 1: \end{aligned}$$

Օրինակ 2. Գտնել $x = 9(t - \sin t)$; $y = 9(1 - \cos t)$; ($0 \leq t \leq 2\pi$) ցիկլոիդի առաջին թռիչքի երկարությունը:

Այս դեպքում՝ $x'(t) = 9(1 - \cos t)$, $y'(t) = 9 \sin t$, ($t \in [0; 2\pi]$):

$$\begin{aligned} &\text{Հետևաբար՝} \\ L &= \int_0^{2\pi} \sqrt{[x'(t)]^2 + [y'(t)]^2} dt = 9 \int_0^{2\pi} \sqrt{(1 - \cos t)^2 + \sin^2 t} dt = \\ &= 9 \int_0^{2\pi} \sqrt{2(1 - \cos t)} dt = \\ &= 18 \int_0^{2\pi} \sin \frac{t}{2} dt = -36 \cos \frac{t}{2} \Big|_{t=0}^{t=2\pi} = -36(\cos \pi - \cos 0) = \\ &= -36(-1 - 1) = 72: \end{aligned}$$


Օրինակ 3. Գտնել $y = 2 \cdot \sin\left(2x + \frac{\pi}{4}\right)$ կորի երկարու-
թյունը $\left[-\frac{\pi}{2}; \frac{\pi}{2}\right]$ հատվածում:

Օրինակ 4. Գտնել $y = 3x^3 - 5$ կորի երկարությունը $[1; 5]$ միջակայքում:

Օրինակ 5. Գտնել $y = 3e^x$ կորի երկարությունը $[0; 7]$ միջակայքում:

1.6.3. Պտտման մարմնի ծավալի հաշվումը

Դիցուք $f(x)$ անընդհատ ոչ բացասական ֆունկցիա է $[a, b]$ հատվածի վրա: Այդ դեպքում կորագիծ սեղանը՝ սահմանափակված կորով $x = a$; $x = b$; ox առանցքով, պտտվելով ox առանցքի շուրջը, առաջացնում է տարածական մարմին, որի ծավալը հաշվվում է հետևյալ բանաձևով (Նկ 6.3)՝



Նկ. 6.3

Ապացույց. Տրոհենք $[a, b]$ հատվածը ցանկացած ձևով x_i կետերով: Յուրաքանչյուր $[x_{i-1}; x_i]$ հատվածի վրա ուղղանկյուն $\Delta x_i = x_i - x_{i-1}$; $f(c_i)$ կողմերով, որը, պտտվելով ox առանցքի շուրջը, առաջացնում է գլան, որի ծավալն է՝

$$V_i = \pi f^2(c_i) \Delta x_i, \text{ որտեղ } f(c_i) = \max_{x \in [x_{i-1}, x_i]} f(x):$$

Հետևաբար առաջացած մարմնի մոտավոր ծավալը կլինի՝

$$V_{\text{պտտ}} \approx \sum_{i=1}^n \pi f^2(c_i) \Delta x_i = \sigma:$$

Այստեղ σ գումարը $f^2(x)$ ֆունկցիայի ինտեգրալային գումարն է: Հաշվենք այդ գումարի սահմանը, երբ $\lambda \rightarrow 0$:

$$V_x = \lim_{\lambda \rightarrow 0} \sum_{i=1}^n \pi f^2(c_i) \Delta x_i = \pi \int_a^b f^2(x) dx, \text{ որտեղ } \lambda = \max_{1 \leq i \leq n} (\Delta x_i):$$

Եթե $x = \varphi(y)$ կորը պտտվում է oy առանցքի շուրջը, որտեղ $y \in [c, d]$, ապա՝

$$V_y = \pi \int_c^d \varphi^2(y) dy:$$

Դիցուք, եթե պատկերը սահմանափակված է $y_1 = f_1(x), y_2 = f_2(x)$; ($0 \leq f_1(x) \leq f_2(x)$) կորերով, $x = a; y = b$ ուղիղներով, ապա պատկերը ox առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի ծավալը հաշվվում է հետևյալ բանաձևով՝

$$V_x = \pi \int_a^b [f_2^2(x) - f_1^2(x)] dx:$$

Օրինակ 1. Հաշվել Տորի ծավալը:

Սահմանում. Այն մարմինը, որը առաջանում է a շառավիղով շրջանը առանցքից b հեռավորության վրա պտտումից, անվանում են տոր:

Լուծում

Հայտնի է շրջանագծի հավասարումը $x^2 + (y - b)^2 = a^2$; ($b \geq a$): Այստեղից՝

$$(y - b)^2 = a^2 - x^2; y - b = \pm \sqrt{a^2 - x^2}; \Rightarrow \begin{cases} y_1 = b + \sqrt{a^2 - x^2} \\ y_2 = b - \sqrt{a^2 - x^2} \end{cases};$$

Այդ դեպքում տորի ծավալը կլինի՝

$$\begin{aligned} V_{\text{տոր}} &= \pi \int_{-a}^a (y_1^2 - y_2^2) dx = \\ &= 2\pi \int_0^a \left[(b + \sqrt{a^2 - x^2})^2 - (b - \sqrt{a^2 - x^2})^2 \right] dx = \\ &= 8\pi b \int_0^a \sqrt{a^2 - x^2} dx: \end{aligned}$$

Նշանակենք $x = a \sin t$; $dx = a \cos t dt$; $a \sin t = 0$; $t_1 = 0$ և $a \sin t = a$; $t_2 = \frac{\pi}{2}$: Այսինքն՝

$$\begin{aligned}
 V_{\text{տոն}} &= 8\pi b \int_0^{\frac{\pi}{2}} \sqrt{a^2 - a^2 \sin^2 t} a \cos t dt = 8\pi a^2 b \int_0^{\frac{\pi}{2}} \cos^2 t dt = \\
 &= 4\pi a^2 b \int_0^{\frac{\pi}{2}} (1 + \cos 2t) dt = \\
 &= 4\pi a^2 b \int_0^{\frac{\pi}{2}} dt + 2\pi a^2 b \int_0^{\frac{\pi}{2}} \cos 2t d2t = 4\pi a^2 b (t - \sin 2t) \Big|_{t=0}^{t=\frac{\pi}{2}} = \\
 &= 2\pi^2 a^2 b:
 \end{aligned}$$

Օրինակ 2. Հաշվել $y = x^2 + x - 3$ կորով, $x = 0; x = 2$ ուղիղներով ox առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի ծավալը:

Օրինակ 3. Հաշվել $y = x^2 - 4; y = x + 5; x = 1; x = 3$ ուղիղներով, ox առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի ծավալը:

Օրինակ 4. Հաշվել $y = \sin 2x; y = e^x; x = 2, x = 5$ ուղիղներով, ox առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի ծավալը:

Օրինակ 5. Հաշվել $y = x \ln(x^2 + 1); y = 2 - x^2; x = 1; x = 3$ ուղիղներով ox առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի ծավալը:

1.6.4. Պտտման մարմնի մակերևույթի մակերեսի

հաշվումը

Ենթադրենք $y = f(x)$ -ը ոչ բացասական է, որն իր առաջին աստիճանի ածանցյալի հետ միասին $[a, b]$ հատվածի վրա անընդհատ ֆունկցիաներ է: Այդ դեպքում $y = f(x)$ ֆունկ-

ցիան ox -ի շուրջը պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը հաշվվում է հետևյալ բանաձևով՝

$$S = 2\pi \int_a^b f(x) \cdot \sqrt{1 + [f'(x)]^2} dx:$$

Ապացույց. Դիցուք $[a, b]$ հատվածը բաժանված է ցանկացած λ նույն n մասի: Գրաֆիկի համապատասխան կետերն են՝ $A_0; A_1; A_2; \dots; A_{i-1}; A_i; \dots; A_n$: Կստանանք $\langle A_0; A_i; A_n \rangle$ բեկյալը, որը ox առանցքի շուրջը պտտելուց առաջացնում է մակերևույթ՝ որպես հատած կոնների կամ զլանների մակերևույթերի միացություն: Ստացված մարմնի i -րդ մակերևույթի մակերեսը կլինի՝ $2\pi[f(x_i) + f(x_{i-1})] \cdot 0.5l_i$, և l_i լարի երկարությունը կորոշվի հետևյալ բանաձևով՝ $l_i[A_{i-1}; A_i] = \sqrt{(x_i - x_{i-1})^2 + [f(x_i) - f(x_{i-1})]^2}$: Ըստ Լանգրանժի թեորեմի՝ $f(x_i) - f(x_{i-1}) = f'(c_i) \cdot \Delta x_i$, որտեղ $c_i \in [x_{i-1}; x_i]$: Այսինքն՝ լարի երկարությունը, հաշվի առնելով վերոգրյալը, կունենա հետևյալ տեսքը

$$\begin{aligned} l_i &= \sqrt{1 + [f'(c_i)]^2} \cdot \Delta x_i; \quad \lambda = \max_{1 \leq i \leq n} \Delta x_i; \\ S_* &= \sum_{i=1}^n 2\pi \frac{f(x_{i-1}) + f(x_i)}{2} \cdot \sqrt{1 + [f'(c_i)]^2} \cdot \Delta x_i \\ S &= \lim_{n \rightarrow \infty} \sum_{i=1}^n 2\pi \frac{f(x_{i-1}) + f(x_i)}{2} \cdot \sqrt{1 + [f'(c_i)]^2} \cdot \Delta x_i = \\ &= 2\pi \int_a^b f(x) \sqrt{1 + [f'(x)]^2} dx: \end{aligned}$$

Եթե կորը տրված է $x = x(t); y = y(t)$ պարամետրական տեսքով $y(t) \geq 0, t \in [\alpha, \beta]$ և ապա՝

$$S = 2\pi \int_{\alpha}^{\beta} y(t) \sqrt{[x'(t)]^2 + [y'(t)]^2} dt:$$

Եթե կորը տրված է $\rho = \rho(\varphi)$ բևեռային կոորդինատներով $\varphi \in [\alpha, \beta]$, ապա՝

$$S = 2\pi \int_{\alpha}^{\beta} \rho \sin \varphi \cdot \sqrt{\rho^2(\varphi) + [\rho'(\varphi)]^2} d\varphi:$$

Օրինակ 1. Հաշվել $y = x^2; x = 0; x = 2$ ուղիղներով օք առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

Օրինակ 2. Հաշվել $y = e^x; x = 0; x = 5$ ուղիղներով օք առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

Օրինակ 3. Հաշվել $y = \sin 2x; x = \frac{\pi}{6}; x = \frac{\pi}{2}$ օք առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

Օրինակ 4. Հաշվել $y = \ln(x + 5); x = 0; x = 3$ ուղիղներով օք առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

Օրինակ 5. Հաշվել $y = \sqrt{x^2 - 9}; x = 5; x = 7$ ուղիղներով օք առանցքի շուրջը առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

Օրինակ 6. Հաշվել $y = -x^2 + 3; x = 0; x = 3$ ուղիղներով օք առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

Օրինակ 7. Հաշվել $y = e^{-2x}; x = 0; x = 4$ ուղիղներով օք առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

Օրինակ 8. Հաշվել $y = \cos 3x$; $x = \frac{\pi}{6}$; $x = \frac{\pi}{3}$ ox առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

Օրինակ 9. Հաշվել $y = \ln(x + 1)$; $x = 0$; $x = e$ ուղիղներով ox առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

Օրինակ 10. Հաշվել $y = \sqrt{x^2 + 4}$; $x = -3$; $x = 2$ ուղիղներով ox առանցքի շուրջը առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

Օրինակ 11. Հաշվել $y = -2x^2$; $x = 0$; $x = 1$ ուղիղներով ox առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

Օրինակ 12. Հաշվել $y = 3^x$; $x = 0$; $x = 3$ ուղիղներով ox առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

Օրինակ 13. Հաշվել $y = \sin^2 x$; $x = \frac{\pi}{6}$; $x = \frac{\pi}{2}$ ox առանցքի շուրջը պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

Գլուխ 2. ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԸ ԵԶՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ

§ 2.1. Սովորական դիֆերենցիալ հավասարումներ

2.1.1. Առաջին կարգի սովորական դիֆերենցիալ հավասարումներ

Հավասարումը կոչվում է դիֆերենցիալ հավասարում, եթե նրա մեջ մտնող անհայտ ֆունկցիան մտնում է իր ածանցյալով: Եթե անհայտ ֆունկցիան մեկ փոփոխականի ֆունկցիա է, ապա հավասարումը կոչվում է սովորական դիֆերենցիալ հավասարում:

Սահմանում 1. Հետևյալ տեսքի հավասարումը՝

$$F(x, y, y') = 0, \quad (2.1.1)$$

որտեղ x -ը անհայտ փոփոխականն է, $y = f(x)$ -ը, որոնելի ֆունկցիան $y' = f'(x)$ -ը՝ տվյալ որոնելի ֆունկցիայի ածանցյալը, կանվանենք առաջին կարգի դիֆերենցիալ հավասարում: Հաճախ (2.1.1) հավասարումը պարզեցումից հետո բերվում է հետևյալ տեսքին՝

$$y' = Q(x, y): \quad (2.1.2)$$

Եթե (2.1.2) հավասարումը փոխարինենք $y' = \frac{dy}{dx}$ -ով, կստանանք՝

$$dy - Q(x, y)dx = 0: \quad (2.1.3)$$

(2.1.3) հավասարումը՝

$$Q_1(x, y)dx + Q_2(x, y)dy = P(x, y), \quad (2.1.4)$$

ընդհանուր տեսքի դիֆերենցիալ հավասարման մասնավոր տեսքն է:

Դիֆերենցիալ հավասարման օրինակներ՝

$$3y' = 5(4x^2 - 3x + 7) \sin^2 3y; \quad 4 \cos 2x \cdot e^{2y} y' = 3 \sin 2x;$$

$$5\sqrt{1-x^2} \sin 2y \cdot y' = 7x:$$

Սահմանում 2. Առաջին կարգի դիֆերենցիալ հավասարման լուծումը, $y = \varphi(x)$ ֆունկցիաները տեղադրելով դիֆերենցիալ հավասարման մեջ, դարձնում է նույնությոն:

Օրինակ. Դիցուք տրված է հետևյալ առաջին կարգի հավասարումը՝

$$2y' - 7x^2 = 0:$$

Այս հավասարման լուծումն է $6y = 7x^3 + c$; ($c = const$) ցանկացած x -ի համար, որը անվանում են այդ դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կոր:

Կոշու խնդիրը. Դիտարկենք հետևյալ խնդիրը՝

$$\begin{cases} y' = f(x; y), \\ y(x_0) = y_0, \end{cases} \quad (2.1.5)$$

որտեղ $f(t; y)$ -ն տրված ֆունկցիա է G տիրույթում, իսկ $\forall (x_0; y_0) \in G$:

Ձևակերպենք հետևյալ հիմնական արդյունքներից մեկը:

Թեորեմ (Կոշի). Դիցուք $f(x; y)$ և $\frac{\partial f}{\partial y}$ ֆունկցիաները որոշված և անընդհատ են G տիրույթում: Այդ դեպքում (2.1.5) Կոշու խնդիրը $\forall (x_0; y_0) \in G$ կետի համար ունի և այն էլ միակ լուծում:

Նախնական կամ Կոշի պայմանը տրվում է հետևյալ տեսքով՝

$$y|_{x=x_0} = y_0: \quad (2.1.6)$$

Կոորդինատական (xoy) հարթության այն բոլոր կետերը, որոնց համար տեղի ունի (2.1.5) պայմանը, անվանում են հատուկ կետեր, որոնցով անցնում են մեկից ավելի ինտեգրալային կորեր, կամ ոչ մի կոր չի անցնում:

Խնդիր 1. Դիտարկենք ռադիոակտիվ նյութի տրոհման խնդիրը, որի զանգվածը t պահին $M(t)$ է: Փորձից հայտնի է, որ ռադիոակտիվ նյութի տրոհման արագությունը ուղիղ համե-

մատական է այդ պահին եղած ռադիոակտիվ նյութի զանգվածին՝

$$\frac{dM(t)}{dt} = -kM(t), \quad (2.1.7)$$

որտեղ k -ն ռադիոակտիվ նյութը բնորոշ հաստատուն է:

Վերոգրյալ 2.1.6 հավասարումից կստանանք՝

$$\frac{dM(t)}{M(t)} = -k dt \Rightarrow \int \frac{dM(t)}{M(t)} = -k \int dt:$$

Այսինքն՝


$$M(t) = \text{const} \cdot e^{-kt};$$

Եթե հայտնի է, որ ռադիոակտիվ նյութը $t = 0$ պահին $M(0) = M_0$ որպես սկզբնական պայման, ապա կունենանք՝

$$M(t) = M_0 \cdot e^{-kt}:$$

Տրված բանաձևը արտահայտում է, որ ռադիոակտիվ նյութը նվազում է էքսպոնենցյալ օրենքով և զրո չի դառնում:

Խնդիր 2. Պահանջվում է գտնել հայելային մակերևույթի տեսքը, որն առանցքային xOy հարթությունում ունի համաչափություն և այնպիսին է, որ առանցքին զուգահեռ ճառագայթները առանցքի որոշակի F ֆոկուսի են անդրադառնում:



Նկ. 2.1.

Լուծում

Խնդրի պահանջը ներկայացված է Նկար 2.1-ում: Համարենք, որ F ֆոկուսը կոորդինատների սկզբնակետի հետ ($F = 0$): $y = f(x)$, կորի ցանկացած $M(x, y)$ կետով տարված

շոշափողի կազմած անկյունը Ox առանցքի հետ նշանակենք α -ով: Հայտնի է, որ ըստ լույսի անդրադարձման օրենքի՝ անկման և անդրադարձման անկյունները իրար հավասար են, այս ΔAFM -ից կունենանք՝

$$BF = FM = z(x) = \sqrt{x^2 + y^2(x)}:$$

Իսկ ΔABM -ից կստանանք հետևյալը՝

$$y'(x) \equiv tg\alpha \equiv \frac{y(x)}{x+z(x)}:$$

Տեղադրելով $z(x)$ -ի արժեքը՝ վերագրյալ արտահայտությունը կբերվի հետևյալ դիֆերենցիալ հավասարմանը՝

$$y'(x) = \frac{y(x)}{x + \sqrt{x^2 + y^2(x)}},$$

կամ անցնելով դիֆերենցիալ տեսքի՝ որոշ ձևափոխություններից հետո կունենանք՝

$$\frac{1}{2} \cdot \frac{d[x^2 + y^2(x)]}{\sqrt{x^2 + y^2(x)}} \equiv dx:$$

Այստեղից ինտեգրելով՝ կստանանք՝

$$\int \frac{d[x^2 + y^2(x)]}{\sqrt{x^2 + y^2(x)}} \equiv \int dx + c:$$

Այսինքն՝

$$\begin{aligned} \sqrt{x^2 + y^2(x)} &\equiv x + c; \Rightarrow x^2 + y^2(x) \equiv x^2 + 2cx + c^2; \Rightarrow x \\ &\equiv \frac{1}{2c} y^2(x) - \frac{c}{2}: \end{aligned}$$

Ստացանք պարաբոլների ընտանիք և պտտելով Ox առանցքի շուրջը՝ կստանանք պարաբոլոիդների ընտանիք:

2.1.2. Առաջին կարգի սովորական դիֆերենցիալ հավասարումների ընդհանուր և մասնակի լուծումներ

Սահմանում 3. (2.1.3) դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծում կանվանենք $y = \varphi(x, c)$ ֆունկցիան, կախված է x փոփոխականից և ցանկացած c հաստատունից:

Այսինքն, եթե այն (2.1.3) հավասարման ընդհանուր լուծումն է, ապա այն լուծում է ցանկացած հաստատունի դեպքում:

Սահմանում 2. (2.1.2) հավասարման մասնակի լուծում կանվանենք այն լուծումը, որը ստացում է որոշակի հաստատունի դեպքում:

Օրինակ 1. $y = x^2 + 3x - 7$ ֆունկցիան $y' = 2x + 3$ դիֆերենցիալ հավասարման մասնակի լուծում է, $y = x^2 + 3x + c$ ֆունկցիան ցանկացած c հաստատունի համար ընդհանուր լուծում: Ընդհանուր լուծման երկրաչափական իմաստը կորդինատական հարթությունում ինտեգրալային կորերի բազմությունն է՝ կախված c հաստատունից:

Օրինակ 2. Գտնենք $y \cdot y' = 3x^2 + 6x - 7$ դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծման ինտեգրալային կորերի բազմությունը:

Լուծում

Դիֆերենցիալ հավասարումը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$y \cdot \frac{dy}{dx} = 3x^2 + 6x - 7; \Rightarrow y \cdot dy = (3x^2 + 6x - 7) \cdot dx; \Rightarrow$$

$$\Rightarrow \int y \cdot dy = \int (3x^2 + 6x - 7) \cdot dx,$$

որտեղից ինտեգրելով կստանանք բինտեգրալային կորերի բազմությունը՝

$$y^2 = 2x^3 + 6x^2 - 14x + c:$$

Օրինակ 3. Գտնենք $e^{2y+3x}y' - (n+1)x^n = \sin(4x-3)$ դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կորերի բազմությունը:

Լուծում

Դիֆերենցիալ հավասարումը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$\begin{aligned} e^{2y} \cdot dy &= e^{-3x}[(n+1)x^n + \sin(4x-3)] \cdot dx, \\ \int e^{2y} \cdot dy &= \int e^{-3x}[(n+1)x^n + \sin(4x-3)] \cdot dx, \\ \frac{1}{2}e^{2y} &= I_1 + I_2 + c, \end{aligned} \quad (2.1.8)$$

որտեղ՝

$$I_1 = \int e^{-3x}(n+1)x^n \cdot dx; \quad I_2 = \int e^{-3x} \sin(4x-3) \cdot dx:$$

Վերագրյալ՝ $I_1; I_2$ ինտեգրալները հաշվենք մասերով ինտեգրման եղանակով՝

$$\begin{aligned} I_1 &= \int e^{-3x}(n+1)x^n \cdot dx = -\frac{n+1}{3} \int x^n \cdot de^{-3x} = \\ &= -\frac{(n+1)x^n}{3} e^{-3x} + \\ &+ \frac{(n+1)n}{3} \int e^{-3x} x^{n-1} \cdot dx = \\ &= -\frac{(n+1)x^n}{3} e^{-3x} - \frac{(n+1)n}{3^2} \cdot \int x^{n-1} \cdot de^{-3x} = \\ &= -\frac{(n+1)}{3} x^n e^{-3x} - \frac{(n+1)n}{3^2} x^{n-1} e^{-3x} + \\ &+ \frac{(n+1)n(n-1)}{3^2} \int e^{-3x} x^{n-2} \cdot dx = \\ &= -\frac{(n+1)}{3} x^n e^{-3x} - \frac{(n+1)n}{3^2} x^{n-1} e^{-3x} - \\ &- \frac{(n+1)n(n-1)}{3^3} x^{n-2} e^{-3x} = \\ &= -\frac{(n+1)e^{-3x}}{3} \left[x^n + \frac{x^{n-1}}{3} + \frac{x^{n-2}}{3^2} + \dots + \frac{1}{3^n} \right], \end{aligned}$$

$$I_2 = \int e^{-3x} \sin(4x - 3) \cdot dx = -\frac{1}{3} \int \sin(4x - 3) \cdot de^{-3x} =$$

$$= -\frac{e^{-3x}}{3} \sin(4x - 3) -$$

$$-\frac{4}{3} \int e^{-3x} \cos(4x - 3) \cdot dx =$$

$$= -\frac{e^{-3x}}{3} \sin(4x - 3) + \frac{4}{9} \int \cos(4x - 3) \cdot de^{-3x} =$$

$$= -\frac{e^{-3x}}{3} \sin(4x - 3) + \frac{4e^{-3x}}{9} \cos(4x - 3) +$$

$$+ \frac{16}{9} \int e^{-3x} \sin(4x - 3) \cdot dx:$$

Այստեղից կստանանք՝

$$I_2 = \frac{e^{-3x}}{9} [4 \cos(4x - 3) - 3 \sin(4x - 3)] + \frac{16}{9} I_2; \Rightarrow$$

$$\Rightarrow I_2 = \frac{e^{-3x}}{15} [3 \sin(4x - 3) - 4 \cos(4x - 3)]:$$

Հետևաբար դիտարկվող դիֆերենցիալ հավասարման (2.1.8) ինտեգրալային կորերի բազմությունը կունենա հետևյալ տեսքը

$$e^{2y} = -\frac{2e^{-3x}}{3} \left\{ (n+1) \left(x^n + \frac{x^{n-1}}{3} + \frac{x^{n-2}}{3^2} + \dots + \frac{1}{3^n} \right) + \right.$$

$$\left. + \frac{[3 \sin(4x - 3) - 4 \cos(4x - 3)]}{5} \right\} \{(n+1)\}:$$

Օրինակ 4. Գտնենք $\sin(3y - 7) \cos(7y + 3) y' = x e^{x^2} + \pi^x \sin(5x + 1)$ դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կորերի բազմությունը:

Լուծում

Դիֆերենցյալ հավասարումը ներկայացնենք հետևյալ տեսքով՝

$$\sin(3y - 7) \cos(7y + 3) \frac{dy}{dx} = x e^{x^2} + \pi^x \sin(5x + 1), \Rightarrow$$

$$\sin(3y - 7) \cos(7y + 3) dy = [x e^{x^2} + \pi^x \sin(5x + 1)] dx, \Rightarrow$$

$$\begin{aligned} \int \sin(3y - 7) \cos(7y + 3) dy = \\ = \int [x e^{x^2} + 9\pi^x \sin(5x + 1)] dx + c: \end{aligned} \quad (2.1.9)$$

Օգտվելով հետևյալ բանաձևից՝

$$\sin \alpha \cos \beta = \frac{1}{2} [\sin(\alpha + \beta) + \sin(\alpha - \beta)],$$

և ընդունելով, որ $\alpha = 3y - 7$; $\beta = 7y + 3$ (2.1.9)-ը կրկնովի հետևյալ տեսքին՝

$$\begin{aligned} \frac{1}{2} \int \sin(10y - 4) dy - \frac{1}{2} \int \sin(4y + 10) dy = \int x e^{x^2} dx + \\ + \int \pi^x \sin(5x + 1) dx, \end{aligned}$$

կամ

$$\frac{1}{2} I_1 + \frac{1}{2} I_2 = I_3 + I_4, \quad (2.1.10)$$

որտեղ

$$I_1 = \int \sin(10y - 4) dy; \quad I_2 = \int \sin(4y + 10) dy,$$

$$I_3 = \int x e^{x^2} dx; \quad I_4 = \int \pi^x \sin(5x + 1) dx:$$

Ապա հաշվենք I_n ($n = \overline{1; 4}$) ինտեգրալները:

$$I_1 = \int \sin(10y - 4) dy = \frac{1}{10} \int \sin(10y - 4) d(10y - 4) = -\frac{1}{10}:$$

$$\begin{aligned} I_2 = \int \sin(4y + 10) dy = \frac{1}{4} \int \sin(4y + 10) d(4y + 10) = \\ = -\frac{1}{4} \cos(4y + 10), \end{aligned}$$

$$\begin{aligned}
I_3 &= \int x e^{x^2} dx = \frac{1}{2} \int e^{x^2} dx^2 = \frac{1}{2} e^{x^2}, \\
I_4 &= \int \pi^x \sin(5x + 1) dx = \int e^{x \ln \pi} \sin(5x + 1) dx = \\
&= \frac{1}{\ln \pi} \int \sin(5x + 1) d e^{x \ln \pi} = \\
&= \frac{e^{x \ln \pi}}{\ln \pi} \sin(5x + 1) - \frac{5}{\ln \pi} \int e^{x \ln \pi} \cos(5x + 1) dx = \\
&= \frac{e^{x \ln \pi}}{\ln \pi} \sin(5x + 1) - \\
&- \frac{5}{(\ln \pi)^2} \int \cos(5x + 1) d e^{x \ln \pi} = \\
&= \frac{\pi^x}{(\ln \pi)^2} [\ln \pi \sin(5x + 1) - 5 \cos(5x + 1)] - \\
&- \frac{25}{(\ln \pi)^2} I_4
\end{aligned}$$

այստեղից կունենանք՝

$$I_4 = \frac{\pi^x}{25 + (\ln \pi)^2} [\ln \pi \sin(5x + 1) - 5 \cos(5x + 1)],$$

և այդ դեպքում դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կորերի բազմությունը կլինի՝

$$\begin{aligned}
&\cos(10y - 4) + \frac{5}{2} \cos(4y + 10) + 5e^{x^2} + \\
&+ \frac{10\pi^x [\ln \pi \sin(5x + 1) - 5 \cos(5x + 1)]}{25 + (\ln \pi)^2} = c:
\end{aligned}$$

Օրինակ 5. Գտնենք $(x^2 + 1) \sin^3(2y - 3) y' = x^3$ դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծումը:

Լուծում

Դիֆերենցիալ հավասարումը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$(x^2 + 1)\sin^3(2y - 3)\frac{dy}{dx} = x^3; \Rightarrow \sin^3(2y - 3)\frac{dy}{dx} = \frac{x^3}{(x^2 + 1)} dx:$$

Այստեղից կստանանք՝

$$I_1 = I_2 + c; \quad (2.1.11)$$

որտեղ

$$I_1 = \int \sin^3(2y - 3) dy; \quad I_2 = \int \frac{x^3}{(x^2 + 1)} dx:$$

Օգտվելով հետևյալ բանաձևից՝

$$4 \sin^3 \alpha = 3 \sin \alpha - \sin 3\alpha, (*)$$

և ընդունելով $\alpha = 2y - 3$, հաշվենք I_1 ինտեգրալը՝

$$\begin{aligned} I_1 &= \int \sin^3(2y - 3) dy = \\ &= \frac{3}{4} \int \sin(2y - 3) dy - \frac{1}{4} \int \sin 3(2y - 3) dy = \end{aligned}$$

$$= \frac{3}{8} \int \sin(2y - 3) d(2y - 3) - \frac{1}{24} \int \sin 3(2y - 3) d3(2y - 3) =$$

$$= -\frac{3}{8} \cos(2y - 3) + \frac{1}{24} \cos 3(2y - 3):$$

այնուհետև՝ I_2 ինտեգրալը՝

$$\begin{aligned} I_2 &= \int \frac{x^3}{(x^2 + 1)} dx = \int \frac{x \cdot x^2}{x^2 + 1} dx = \int \frac{x \cdot (x^2 + 1 - 1)}{x^2 + 1} dx = \\ &= \int \frac{x(x^2 + 1)dx}{x^2 + 1} - \int \frac{xdx}{x^2 + 1} = \end{aligned}$$

$$= \frac{1}{2} \int dx^2 - \frac{1}{2} \int \frac{dx^2}{x^2 + 1} = \frac{x^2 - \ln(x^2 + 1)}{2}:$$

Այդ դեպքում դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կորերի բազմությունը կլինի՝

$$\cos 3(2y - 3) - 9 \cos(2y - 3) = 12[x^2 - \ln(x^2 + 1)] + c:$$

Առաջադրանքներ

Օրինակ 1. Գտնել $e^{-3y} \cos^3(2 - 5y) y' = (3x^2 + 7x + 1) \sin(4x - 1)$ դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կորերի բազմությունը:

Ցուցում. Օգտվել $\cos 3\alpha = 4 \cos^3 \alpha - 3 \cos \alpha$ բանաձևից:

Օրինակ 2. Գտնել

$$\pi^{2y-3x}(y^2 + 4y - 9)y' = \sin^3(2x - 1) + e^{3x}$$

դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կորերի բազմությունը:

Օրինակ 3. Գտնել

$$e^{3y} \sin(2y - 7) \sin(3y - 4) y' + \frac{1}{\sqrt{x^2 + 1}} = \sin^3(x - 5) \cos 3x$$

դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կորերի բազմությունը:

Օրինակ 4. Գտնել

$$(2y^2 - 7y + 4) \sin 2y \cdot y' + 3\pi^{2x} \cos 3x = \ln(x^2 + 1)$$

դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծումը:

Օրինակ 5. Գտնել

$$\pi\sqrt{y^2 - 9} \cdot y' - 10(6x^2 - x + 1)\pi^{3x} = \operatorname{tg}(2x - 7)$$

դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծումը:

Օրինակ 6. Գտնել

$$\begin{aligned} 7e^{2y}[\sin 3y \sin 2y - \sin^3(y - 1)] \cdot y' = \\ = (x^2 - 4x + 1) \cos^3(2x - 7) \end{aligned}$$

դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կորերի բազմությունը:

Օրինակ 7. Գտնել

$$3 \cos^2(7y - 3) \cdot y' + 11(x + 3) \sin^3(x + 2) = 0$$

դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կորերի բազմությունը:

Օրինակ 8. Գտնել

$$(y^3 - 3y + 11) \cos^2(7y - 3) \cdot y' + 3^x \sin^3(5x - 11) = 0$$

դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կորերի բազմությունը:

Օրինակ 9. Գտնել

$$3 \cos^2(7y - 3) \sin^3(3y - 7) \cdot y' + \sin^2(x + 2) \cos^3(x - 2) = 0$$

դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կորերի բազմությունը:

Օրինակ 10. Գտնել

$$3 \operatorname{tg}(5y - 4) \cdot y' + 8 \operatorname{ctg}(x + 2) = \sin(x - 1) \cos(x + 1)$$

դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կորերի բազմությունը:

Օրինակ 11. Գտնել

$$\begin{aligned} e^{2y} \sin(y + 1) \cos(2y + 3) \sin(3y + 4) \cdot y' = \\ = \sin^2(x + 1) \sin(x - 2) \end{aligned}$$

դիֆերենցիալ հավասարման ինտեգրալային կորերի բազմությունը:

2.1.3. Փոփոխականների անջատման մեթոդի կիրառությունը առաջին կարգի սովորական դիֆերենցիալ հավասարումներում

Դիցուք տրված է հետևյալ առաջին կարգի դիֆերենցիալ հավասարումը՝

$$f_1(x)F_1(y)dx + f_2(x)F_2(y)dy = 0: \quad (2.1.12)$$

Սահմանում 1. (2.1.7) տեսքի հավասարումը, որտեղ $f_1(x)$, $F_1(x)$, $f_2(x)$ և $F_2(x)$ ֆունկցիաները հավասար չեն 0-ի, կանվանենք անջատվող փոփոխականներով դիֆերենցիալ հավասարում: (2.1.7) հավասարման երկու մասերը բաժանենք $f_2(x)F_1(y)$ -ի վրա, կստանանք՝

$$\frac{f_1(x)}{f_2(x)} dx + \frac{F_2(y)}{F_1(y)} dy = 0:$$

Ինտեգրելով ստացված հավասարման երկու մասերը՝ կունենանք՝

$$\int \frac{f_1(x)}{f_2(x)} dx + \int \frac{F_2(y)}{F_1(y)} dy = c$$

և (2.1.7) հավասարման ընդհանուր լուծումը անբացահայտ տեսքով:

Կատարելով հետևյալ նշանանակումները՝

$$f(x) = \int \frac{f_1(x)}{f_2(x)} dx \text{ և } F(y) = \int \frac{F_2(y)}{F_1(y)} dy, \quad (2.1.13)$$

կստանանք (2.1.13) հավասարման ընդհանուր լուծումը հետևյալ պարզ տեսքով՝

$$f(x) + F(y) = c:$$

Օրինակ 1. Լուծել հավասարումը՝

$$2y' = \frac{y^2}{x+1}:$$

Գտնել հավասարման ընդհանուր լուծումը և մասնակի լուծումը, երբ $x = e$, ապա $y=3$:

Լուծում

Տրված հավասարումը բերվում է հետևյալ տեսքին՝

$$2 \frac{dy}{dx} = \frac{y^2}{x+1}; \Rightarrow 2 \frac{dy}{y^2} = \frac{dx}{x+1}:$$

Ինտեգրենք երկու մասերը,

$$\Rightarrow 2 \int \frac{dy}{y^2} = \int \frac{dx}{x+1} + c:$$

Այստեղից կստանանք դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծումը՝

$$-\frac{2}{y} = \ln(x+1) + c, \Rightarrow y = -\frac{2}{\ln(x+1) + c}:$$

Այնուհետև ստանանք հավասարման մասնակի լուծումը: Քանի որ $x = e - 1$, ապա $y = 3$ ընդհանուր լուծումից կունենանք՝

$$y = -\frac{2}{\ln(x+1) + c}, \Rightarrow 3 = -\frac{2}{\ln(e-1+1) + c}, \Rightarrow$$

$$\Rightarrow 3 = -\frac{2}{1+c}, \quad c = -\frac{5}{3}:$$

Այսինքն հավասարման մասնակի լուծումը կլինի՝

$$y = 6(5 - 3 \ln(x+1))^{-1}:$$

Օրինակ 2. Լուծել հավասարումը՝

$$e^x(y-3)y' = \frac{2x}{y+3}:$$

Գտնել հավասարման ընդհանուր լուծումը և մասնակի լուծումը, երբ $x=0$, ապա $y=3$:

Լուծում

Տրված հավասարումը բերվում է հետևյալ տեսքին՝

$$\begin{aligned}
e^x(y-3)\frac{dy}{dx} &= \frac{2x}{y+3}, \Rightarrow (y^2-9)dy = 2xe^{-x}dx, \Rightarrow \\
&\Rightarrow \int (y^2-9)dy = 2 \int xe^{-x}dx + c, \rightarrow \\
&\Rightarrow \frac{y^3}{3} - 9y = 2xe^{-x} - 2 \int e^{-x}dx + c, \Rightarrow \frac{y^3}{3} - 9y \\
&= 2e^{-x}(x+1) + c:
\end{aligned}$$

Այստեղից հավասարման ընդհանուր լուծումը կունենա հետևյալ տեսքը՝

$$y^3 - 27y = 6e^{-x}(x+1) + c:$$

Ստանանք հավասարման մասնակի լուծումը:

Քանի որ $x=0$; $\rightarrow y=3$, ապա ընդհանուր լուծումից կունենանք՝

$$\begin{aligned}
y^3 - 27y &= 6e^{-x}(x+1) + c, \Rightarrow 3^3 - 27 \cdot 3 = 6 \cdot e^0(0+1) + c, \Rightarrow \\
&\Rightarrow c = -60:
\end{aligned}$$

Այստեղից կունենանք հավասարման մասնակի լուծումը հետևյալ տեսքով՝

$$y^3 - 27y = 6e^{-x}(x+1) - 60:$$

Օրինակ 3. Լուծել հավասարումը՝

$$3(x^2+4)y' - (4+x)\sqrt{9-y^2} = 0:$$

Գտնել հավասարման ընդհանուր լուծումը և մասնակի լուծումը, երբ $x=0$, ապա $y=0$:

Լուծում

Տրված հավասարումը բերվում է հետևյալ տեսքին՝

$$\begin{aligned}
3 \frac{x^2+4}{\sqrt{9-y^2}} y' &= 4+x, \Rightarrow \frac{3(x^2+4)}{\sqrt{9-y^2}} \cdot \frac{dy}{dx} = 4+x, \Rightarrow \int \frac{3dy}{\sqrt{9-y^2}} = \\
&= \int \frac{(4+x)dx}{x^2+4} + c:
\end{aligned}$$

Ինտեգրելուց հետո կստանանք հավասարման ընդհանուր լուծումը հետևյալ տեսքով՝

$$\arcsin \frac{y}{3} = 2 \arctg \frac{x}{2} + \frac{1}{2} \ln(x^2 + 4) + c:$$

Այնուհետև ստանանք հավասարման մասնակի լուծումը:

Քանի որ $x = 2; \Rightarrow y = 3$, ապա ընդհանուր լուծումից կունենանք՝

$$\begin{aligned} \arcsin \frac{y}{3} &= 2 \arctg \frac{x}{2} + \frac{1}{2} \ln(x^2 + 4) + c, \rightarrow \arcsin 1 = \\ &= 2 \arctg 1 + \ln 8 + c, \rightarrow c = -\ln 8: \end{aligned}$$

Հետևաբար մասնակի լուծումը կլինի՝

$$\arcsin \frac{y}{3} = 2 \arctg \frac{x}{2} + \ln \frac{\sqrt{x^2 + 4}}{8}:$$

Օրինակ 4. Լուծել հավասարումը՝

$$(x^2 + 16)(y + 1)y' + \frac{2x}{3 \sin y} = 0:$$

Գտնել հավասարման ընդհանուր լուծումը և մասնակի լուծումը, երբ $x = 0; \Rightarrow y = 0$:

Լուծում

Տրված հավասարումը բերվում է հետևյալ տեսքին՝

$$3(y + 1) \sin y \cdot y' + \frac{2x}{\sqrt{x^2 + 16}} = 0:$$

Այստեղից կունենանք՝

$$3(y + 1) \sin y \cdot dy + \frac{2x}{\sqrt{x^2 + 16}} dx = 0:$$

Ինտեգրելով տվյալ հավասարումը՝

$$3 \int y \sin y dy + 3 \int \sin y dy + \int \frac{2x dx}{\sqrt{x^2 + 16}} dx = 0,$$

կատանանք հավասարման ընդհանուր լուծումը՝

$$\sin y - (1 + y)\cos y + \frac{2}{3}\sqrt{x^2 + 16} = c:$$

Քանի որ $x = 0, \Rightarrow y = 0$, կունենանք՝ $c = \frac{5}{3}$, և մասնավոր լուծումը կլինի՝

$$\sin y - (1 + y)\cos y + \frac{2}{3}\sqrt{x^2 + 16} = \frac{5}{3}:$$

Օրինակ 5. Լուծել հավասարումը՝

$$\frac{2}{1 + \cos 2y}y' + \frac{3}{x^2 + 25} = 0:$$

Գտնել հավասարման ընդհանուր լուծումը և մասնակի լուծումը, երբ $x = 1; \Rightarrow y = \frac{\pi}{4}$:

Օրինակ 6. Լուծել հավասարումը՝

$$\frac{3}{7\sin^2 3y}y' - \frac{2}{5\cos^2 2x} = 0:$$

Գտնել ներքոգրյալ հավասարումների ընդհանուր լուծումը և մասնակի լուծումը, երբ $x = 45^\circ, \Rightarrow y = 30^\circ$:

Օրինակ 7. Լուծել հավասարումը՝

$$5(x^2 - 9) \cdot y' + 7\sqrt{y^2 + 1} = 0:$$

Օրինակ 8. Լուծել հավասարումը՝

$$3y \sin^2(2x + 1) \cdot y' - 5 \cos^2 y^2 = 0:$$

Օրինակ 9. Լուծել հավասարումը՝

$$2 \sin^2(2x + 45^\circ) \cdot y' + 7\sqrt{y^2 + 1} = 0:$$

Օրինակ 10. Լուծել հավասարումը՝

$$9\sqrt{16-x^2} \cdot y' - 2(x^2 - 25) = 0:$$

Օրինակ 11. Լուծել հավասարումը՝

$$2\sqrt{4+x^2} \cdot y' - 3\frac{e^{2y^2}}{y} = 0:$$

Օրինակ 12. Լուծել հավասարումը՝

$$5 \ln(y+3) e^x \cdot y' - 9 \frac{(x^2+12)}{y} = 0:$$

Օրինակ 13. Լուծել հավասարումը՝

$$\cos^2(3x+15^\circ) \cdot y' - \sin^2(3x-15^\circ) = 0:$$

Օրինակ 14. Լուծել հավասարումը՝

$$2(x^2+3x+11) \cdot y' - 3(y^2-2y+5) = 0:$$

Օրինակ 15. Լուծել հավասարումը՝

$$7\sqrt{49+y^2} \cdot y' - 2\frac{(x^2-16)}{y} = 0:$$

2.1.4. Համասեռ սովորական դիֆերենցիալ հավասարումներ

Սահմանում 1. Կասենք, որ $f(x, y)$ -ը α կարգի համասեռ ֆունկցիա է, երբ (x, y) կետը պատկանում է որոշման տիրույթին, հետևում է, որ (tx, ty) կետն էլ է պատկանում այդ տիրույթին ($t > 0$), այսինքն՝ $f(tx, ty) = t^\alpha f(x, y)$:

Սահմանում 2. Հետևյալ տեսքի դիֆերենցիալ հավասարումը՝

$$P(x, y)dx + Q(x, y)dy = 0, \quad (2.1.14)$$

կոչվում է համասեռ, եթե $P(x, y)$ և $Q(x, y)$ նույն α կարգի համասեռ ֆունկցիաներ են:

Երբ $x > 0$, ձևափոխելով (2.1.14) հավասարումը և օգտվելով նրանից, որ $P(x, y)$, $Q(x, y)$ ֆունկցիաները համասեռ են, կստանանք՝

$$\begin{aligned} P\left(x \cdot l, x \cdot \frac{y}{x}\right) dx + Q\left(x \cdot l, x \cdot \frac{y}{x}\right) dy &= 0; \Rightarrow \\ \Rightarrow x^\alpha P\left(l, \frac{y}{x}\right) dx + x^\alpha Q\left(l, \frac{y}{x}\right) dy &= 0; \Rightarrow \\ \Rightarrow \frac{dy}{dx} = -\frac{P\left(l, \frac{y}{x}\right)}{Q\left(l, \frac{y}{x}\right)} \equiv f\left(\frac{y}{x}\right), \{P, Q \in C(D), (D) \subset R^2, Q(x, y) \neq 0\}: \end{aligned}$$

Այսպիսով, համասեռ սովորական դիֆերենցիալ հավասարումները բերվում են հետևյալ տեսքի՝

$$\frac{dy}{dx} = f\left(\frac{y}{x}\right); f \in C(D): \quad (2.1.15)$$

Ներմուծենք նոր որոնելի ֆունկցիա՝

$$\begin{aligned} z(x) = \frac{y}{x}; \Rightarrow y = zx; \Rightarrow y' = z + xz'; \Rightarrow z + xz' &= f(z); \Rightarrow \\ \Rightarrow \frac{dz}{f(z) - z} = \frac{dx}{x}; \end{aligned}$$

Ստացվեց անջատված փոփոխականներով դիֆերենցիալ հավասարում:

Երբ $f(z) = z$, այդ դեպքում (2.1.10)-ը բերվում է հետևյալ հավասարմանը՝

$$\frac{dy}{dx} = \frac{y}{x}, \Rightarrow \int \frac{dy}{y} = \int \frac{dx}{x} + \ln c, \Rightarrow \ln y = \ln cx, \Rightarrow y = cx,$$

և ստացանք գծային ֆունկցիաների ընտանիքը:

Սահմանում 3. Հետևյալ տեսքի դիֆերենցիալ հավասարումը՝

$$y' + p(x)y = q(x)y^k, (k \neq 0; k \neq 1) \quad (2.1.16)$$

անվանում են **Բեռնուլիի** հավասարում:

Ենթադրելով, որ $y \neq 0$ և բաժանելով y^k -ի վրա, կստանանք՝

$$\frac{1}{1-k} (y^{1-k})' + P(x)y^{1-k} = q(x):$$

Կատարելով նշանակում՝ $y^{1-k} = z(x)$ ՝ ստանում ենք հետևյալ գծային դիֆերենցիալ հավասարումը՝

$$\frac{1}{1-k} \frac{dz}{dx} + p(x)z = q(x):$$

Սահմանում 4. Հետևյալ տեսքի դիֆերենցիալ հավասարումը՝

$$\frac{dy}{dx} + p(x)y + q(x)y^2 = f(x), \quad (2.1.12)$$

անվանում են **Ռիկատիի** հավասարում:

Ընդհանուր դեպքում (2.1.12)-ը հնարավոր չէ լուծել: Եթե հայտնի լինի հավասարման որևէ $y_1(x)$ լուծում, ապա կատարելով (2.1.12)-ում փոփոխականի փոխարինում՝

$$z(x) = y(x) - y_1(x),$$

կստանանք՝

$$y_1' + z' + p(x)(y_1 + z) + q(x)(y_1 + z)^2 = f(x)$$

կամ ընդունելով $f(x) \equiv y_1' + p(x)y_1 + q(x)y_1^2$ ՝ վերոգրյալ հավասարումը կրեքվի

$$z' + [p(x) + 2q(x)]z + q(x)z^2 = 0$$

Բեռնուլիի հավասարմանը:

Օրինակ 1. Լուծել հետևյալ համասեռ սովորական դիֆերենցիալ հավասարումը՝

$$x \cdot y' = y + x \cdot \sin \frac{y}{x};$$

Օրինակ 2. Լուծել հետևյալ համասեռ սովորական դիֆերենցիալ հավասարումը՝

$$2xy \cdot y' = y^2 + x^3;$$

Այս հավասարումը բերվում է Բեռնուլիի հավասարմանը՝

$$\frac{dy}{dx} = \frac{y}{2x} + \frac{x^2}{2y}; \quad (2.1.13)$$

Կատարելով հետևյալ նշանակումը՝ $y^2 = z(x)$, վերագրյալ դիֆերենցիալ հավասարումը կբերվի հետևյալ գծային հավասարմանը՝

$$\frac{dz}{dx} = \frac{z}{x} + x^2,$$

որի ընդհանուր լուծումն է $z(x) = c_1 x + \frac{x^3}{2}$,

հետևաբար $y = \pm \sqrt{c_1 x + \frac{x^3}{2}}$:

2.1.5. Ածանցյալի նկատմամբ բարձր կարգի դիֆերենցիալ հավասարումներ

Ա) Դիցուք տրված է հետևյալ սովորական դիֆերենցիալ հավասարումը՝

$$a(y')^2 + by' + c = 0; \quad (a; b; c = const) \quad (2.1.14)$$

Գտնել տվյալ դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծումը:

Լուծում

Հավասարումը լուծելու համար կատարենք նշանակում՝

$$y' = z: \quad (2.1.15)$$

Այդ դեպքում (2.1.14) դիֆերենցիալ հավասարումը կբերվի հետևյալ տեսքին՝

$$az^2 + bz + c = 0: \quad (2.1.16)$$

Լուծելով (2.1.16) քառակուսի հավասարումը՝ կստանանք՝

$$z = \left\{ z_{1,2} = \frac{-b + \sqrt{D}}{2a}, (D > 0), z_3 = \frac{-b}{2a}; (D = 0); z_{4,5} = \frac{-b + i\sqrt{D}}{2a}, (D < 0; i = \sqrt{-1}) \right\}:$$

Հաշվի առնելով z -ի արժեքը՝ (2.1.15) դիֆերենցիալ հավասարումից կստանանք՝

$$\frac{dy}{dx} = z, \Rightarrow \int dy = z \int dx + const, \Rightarrow y = zx + const:$$

Բ) Դիցուք տրված է հետևյալ սովորական դիֆերենցիալ հավասարումը՝

$$ae^{Ex+Fy} \sin^2(Ay + B) (y')^2 + be^{\frac{Ex+Fy}{2}} (Mx + N) \sin(Ay + B) y' + c(Mx + N)^2 = 0: \quad (2.1.17)$$

Գտնել տվյալ դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծումը:

Լուծում

Նախ հավասարումը բաժանենք $(Mx + N)^2 \neq 0$ -ի վրա, կստանանք՝

$$a \left(\frac{e^{\frac{Ex+Fy}{2}} \sin(Ay + B) y'}{Mx + N} \right)^2 + b \left(\frac{e^{\frac{Ex+Fy}{2}} \sin(Ay + B) y'}{Mx + N} \right) + c = 0,$$

և կատարենք նշանակում՝

$$\frac{e^{\frac{Ex+Fy}{2}} \sin(Ay + B) y'}{Mx + N} = t: \quad (2.1.18)$$

Այդ դեպքում (2.1.17) դիֆերենցիալ հավասարումը կբերվի հետևյալ տեսքին՝

$$at^2 + bt + c = 0: \quad (2.1.19)$$

Լուծելով (2.1.16) քառակուսի հավասարումը՝ կստանանք՝

$$t = \left\{ t_{1,2} = \frac{-b \pm \sqrt{D}}{2a}, (D > 0); t_3 = \frac{-b}{2a}, (D = 0); \right. \\ \left. t_{4,5} = \frac{-b \pm i\sqrt{D}}{2a}, (D < 0; i = \sqrt{-1}) \right\}:$$

Հաշվի առնելով t -ի արժեքը՝ (2.1.18) դիֆերենցիալ հավասարումից կստանանք՝

$$e^{\frac{Fy}{2}} \sin(Ay + B) y' = t(Mx + N) e^{\frac{Ex}{2}}, \Rightarrow e^{\frac{Fy}{2}} \sin(Ay + B) dy = \\ = t e^{\frac{Ex}{2}} (Mx + N) dx:$$

Այստեղից կունենանք՝

$$I_1 = t \cdot I_2 + const, \quad (2.1.20)$$

որտեղ

$$I_1 = \int e^{\frac{Fy}{2}} \sin 2(Ay + B) dy, I_2 = \int e^{\frac{Ex}{2}} (Mx + N) dx:$$

Նախ հաշվենք I_1 ինտեգրալը՝

$$I_1 = \int e^{\frac{Fy}{2}} \sin(Ay + B) dy = \frac{2}{F} \int \sin(Ay + B) de^{\frac{Fy}{2}} = \\ = \frac{2e^{\frac{Fy}{2}}}{F} \sin(Ay + B) -$$

$$- \frac{2A}{F} \int e^{\frac{Fy}{2}} \cos(Ay + B) dy = \frac{2e^{\frac{Fy}{2}}}{F} \sin(Ay + B) -$$

$$-\frac{4Ae^{\frac{Fy}{2}}}{F^2} \cos(Ay + B) - \frac{4A^2}{F^2} I_1:$$

Այսինքն՝

$$I_1 = \frac{2e^{\frac{Fy}{2}}}{F^2 + 4A^2} [F \sin(Ay + B) - 2A \cos(Ay + B)]:$$

Հաշվենք I_2 ինտեգրալը՝

$$\begin{aligned} I_2 &= \int e^{\frac{Ex}{2}} (Mx + N) dx = \frac{2}{E} \int (Mx + N) de^{\frac{Ex}{2}} = \\ &= \frac{2e^{\frac{Ex}{2}}}{E^2} [E(Mx + N) - 2M]: \end{aligned}$$

Հաշվի առնելով I_1 ; I_2 ինտեգրալները՝ դիտարկվող դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծումը կլինի՝

$$\begin{aligned} \frac{2e^{\frac{Fy}{2}}}{F^2 + 4A^2} [F \sin(Ay + B) - 2A \cos(Ay + B)] = \\ = t \cdot \frac{2e^{\frac{Ex}{2}}}{E^2} [E(Mx + N) - 2M] + const: \end{aligned}$$

Գ) Դիցուք, տրված է հետևյալ սովորական դիֆերենցիալ հավասարումը՝

$$\begin{aligned} A \left(\frac{f(y)y'}{\varphi(x)} \right)^3 + B \left(\frac{f(y)y'}{\varphi(x)} \right)^2 + C \frac{f(y)y'}{\varphi(x)} + E \\ = 0; \quad (A; B; C; E = const): \end{aligned} \quad (2.1.21)$$

Գտնել (2.1.14) հավասարման ընդհանուր լուծումը:

Լուծում

(2.1.14) դիֆերենցիալ հավասարումում կատարելով հետևյալ նշանակումը՝

$$\frac{f(y)y'}{\varphi(x)} = q, \quad (2.1.22)$$

կստանանք՝

$$Aq^3 + Bq^2 + Cq + E = 0: \quad (2.1.23)$$

Ենթադրելով, որ երրորդ կարգի (2.1.23) հավասարման արմատներից մեկը $q = q_0$ կատարենք հետևյալ գործողությունը՝

$\frac{Aq^3 + Bq^2 + Cq + E}{Aq^3 - Aq_0q^2}$	$\frac{q - q_0}{Aq^2 + B_0q + C_0}$
$\frac{B_0q^2 + Cq}{B_0q^2 - B_0q_0q}$	
$\frac{C_0q + E}{C_0q - C_0q_0}$	
$E + C_0q_0$	

Այստեղից, եթե.

$$Aq^3 + Bq^2 + Cq + E = (q - q_0)(Aq^2 + B_0q + C_0), \quad (2.1.24)$$

անհրաժեշտ է, որ տեղի ունենա հետևյալ պայմանը՝

$$B_0 = B - Aq_0; \quad C_0 = C + B_0q_0; \quad E + C_0q_0 = 0:$$

Հետևաբար նկատի ունենալով (2.1.24) վերլուծությունը՝ (2.1.23) հավասարման լուծումները կլինեն՝

$$q = \left\{ q_{1,2,3} = \frac{-B_0 \pm \sqrt{\Delta}}{2A}, (\Delta \geq 0), \right. \\ \left. q_{4,5} = \frac{-B_0 \pm i\sqrt{\Delta}}{2A} (\Delta < 0; i = \sqrt{-1}), q_6 = q_0 \right\}: \quad (2.1.25)$$

Հաշվի առնելով (2.1.24) ու (2.1.25) արտահայտությունները՝ (2.1.22)-ը կրեքվի հետևյալ հավասարմանը՝

$$I_f = q \cdot I_\varphi + const, \quad (2.1.26)$$

որտեղ՝

$$I_f = \int f(y)dy; \quad I_\varphi = q \int \varphi(x)dx: \quad (2.1.27)$$

Տրված $f(y)$; $\varphi(x)$ ֆունկցիաների դեպքում հաշվելով I_f ; I_φ ինտեգրալները և տեղադրելով (2.1.26)-ի մեջ՝ կստանանք (2.1.21)-ի ընդհանուր լուծումը:


§ 2.2. Սովորական դիֆերենցիալ հավասարումների կիրառությունը ֆիզիկայի խնդիրներում

2.2.1. Ֆիզիկայի՝ փոփոխականների անջատման մեթոդով դիֆերենցիալ հավասարումների ինտեգրմանն ուղղված խնդիրներ

Անհամասեռ միջավայրում մարմնի շարժման դեպքում դիմադրության ուժը փոխվում է

$$F = -\frac{2v^2}{3+s}, \quad (2.2.1)$$

որտեղ v -ն մարմնի արագությունն է մ/վրկ-ով, իսկ s -ը՝ անցած ճանապարհը մետրով: Որոշել անցած ճանապարհը որպես ժամանակի ֆունկցիա, եթե սկզբնական արագությունը $v_0 = 5$ մ/վ (Նկ.2.1):



Նկ. 2.1

Լուծում

Ենթադրենք շարժումը կատարվում է ox առանցքի ուղղությամբ, և $t = 0$ պահին մարմինը գտնվում է կոորդինատների սկզբնակետում, այդ դեպքում ուժի պրոյեկցիան, որը կիրառվում է մարմնի վրա կտրվի հետևյալ տեսքով՝

